№ 203 ՈՒՐԲԱԹ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ

1912
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՈՒՐԲԱԹ, 14 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ № 203

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը
և 7 ամսվանը 6 ռուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տելեֆօն № 2—53.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 20 կօպէկ.

Տպարանի տելեֆօն № 67.

ՄՇԱԿ
ՔԱՌԱՍՈՒՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaktion du journal „MSHAK".

ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ ՄԻՆՉԵՒ
ՏԱՐՎԱՑ ՎԵՐՋԸ 4 ՌՈՒԲԼԻ։

Սեպտեմբ. 1-ից մինչև հոկտ. 1-ը 85 կ.։ Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամակադրոշմ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К°, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնոյում՝ Большая, 38, Փարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԾՈՎԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

սրանով յայտարարում է ի գիտութիւն ընդհանուրի, որ ներկայ թւից պ. Ց. ԲԱՐԻԿԵՆԴԱՆԵԱՆԸ այլես Ընկերութեանս գործակալը չէ. Նրա փոխարէն հրաւիրված է պ. Ս. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆԸ, որին և պէտք է դիմել Ընկերութեանս գործերով։

Ն. Պակէ և Ընկ. գրասենեակը գտնվում է Ս. Կիւլպէնկեանի գրասենեակին կից, Արմենակի բազար, գօստինիյ դվօր Մանթաշեանի. տելեֆօն № 721.

Գլխաւոր գործակալ Ն. Պակէ և Ընկ. Վ. ԴԱՐՆՕ
(ու.) առ. 677. 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ
Մ. Ի. ՄՈՒՐԱԴԵԱՆ
Օգնական Prof. Posner-ի

Ընդունում է միզասեռական (վեներական) հիւանդներին Բերլինի իր խորհրդակցական կաբինետի և պրոֆ. Պօզների կլինիկայի մէջ։ Տալիս է նաև խորհուրդներ միւս մասնագիտութիւնների վերաբերեալ։

Հասցէն՝ D-r Muradoff Berlin. Iohannisstr. 15 (an der Friedrichstrasse). Telefon amt Norden 113—19.
(չ.ու.կ.) առ. 675. 30—2

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 սեպտեմբերի

Պարիզ.—Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլայէվիչը, Մեծ Իշխանուհի Անաստասիա Նիկոլայէվնան և զինուորական մինիստր Միլէրանը երեկոյեան վերադարձան Պարիզ։ Մեծ Իշխանը կայարանում երկար խօսակցութիւն ունեցաւ գեներալ Ժոֆֆրի հետ։

Մեծ Իշխանը այցելեց նախագահին Ելիսեան պալատում։ Այցելութիւնը տևեց քառորդ ժամ։ Շուտով Ֆալիէրը փոխ-այցելութիւն գործեց։

Մեծ Իշխանը Օգոստափառ կնոջ հետ մեկնեցին Պետերբուրգ։ Հիւսիսային կայարանում հրաժեշտ տուին Միլէրանը, Դելկասէն, Սաէզը, Իզվօլսկին, Լուին և շատ ուրիշներ։ Կայարանի առաջի մասում գրված էր պատուաւոր պահակախումբ հանրապետական հեծելազնդից։ Նախագահի անունից Մեծ Իշխանուհուն մատուցին ծաղկեփունջ ֆրանսիական ծաղիկներից։ Բազմաթիւ ամբոխը սրտանց ողջունում էր Նոցին Բարձրութիւններին։

—

Կոպէնհագէն.—Եկաւ ռուսաց նաւատորմը։

Էսսէնը իր շտաբի և նաւերի հրամանատարների հետ անցաւ կայսերական «Պօլեարնայա Զվեզդա» զբօսանաւը։ Ժամը 1-ին ծովակալը և բոլոր հրամանատարները հրաւիրվեցին նախաճաշի։ Վաղը ի պատիւ ռուս օֆիցերների պաշտօնական ճաշ է լինելու պետական պաշտպանութեան մինիստրի մօտ։ Հետևեալ օրը մեր օֆիցերները հրաւիրված են պալատ։

«Բերլինգսկէ-Տիդէնդէն» գրում է. «Ռուսաստանին և Դանիային միացնող սերտ կապերը բնաւ չեն թուլացել։ Երկու ժողովուրդներին կապում է դարաւոր բարեկամութիւնը։ Մեր հիւրերը կընդունվեն անկեղծ բարեկամութեան զգացմունքով»։

—

Վիէննա.—Ունգարական պատգամաւորութեան զինուորական մասնաժողովի մէջ զինուորական մինիստրը ընդգծեց, որ զինուորական մինիստրութիւնը, նկատի առնելով երկրի ֆինանսական դրութիւնը և պետական կարիքները, սահմանափակեց իր պահանջները երկու կառավարութիւններից մշակված ծրագրի ճշգրիտ սահմաններով։ Նաւատորմի գլխաւոր պետը մատնանշեց, որ նորմալ բիւջէի աւելացումը չէ համապատասխանում ծովային մինիստրութեան պահանջներին, առանձնապէս քիչ են նաւակառուցման համար յատկացված գումարները։ Նա իր ճառն աւարտեց հետևեալ խօսքերով. «Աւստրո-Ունգարիային հարկաւոր է բաւականին ուժեղ նաւատորմ ծովափը պաշտպանելու համար։ Այդ նպատակից մենք դժբաղդաբար դեռ շատ հեռու ենք։ Բոլոր պետութիւնները, նոյնիսկ ամենափոքրերը, եռանդուն գործունէութիւն են ցոյց տալիս իրանց ծովային ույժերը մեծացնելու։ Այդ հանգամանքը պէտք է դրդէ Աւստրո-Ունգարիային արագօրէն ընթանալ այն ճանապարհով, որի վրա նա ոտք է դրել»։

Լրագիրները, պատգամաւորութեան անդամները և քաղաքական գործիչները ընդգծում են Բերհտօլդի ճառի խորին լուրջ տոնը, որ մռայլ գոյներով է պատկերացնում իրերի դրութիւնը։ Այդ ճառի լեզուն աւելի քիչ լաւատես է, քան նախկին ճառերի, որոնք նուիրված էին Բալկանի ճգնաժամին։ Լրագիրների մեծ մասը հաւանում է Բերհտօլդի ճառի անկեղծութիւնը ու պարզութիւնը, ճառի, որի ամեն մի խօսքը թողնում է ճշմարտութեան տպաւորութիւն։

Զինուորական մասնաժողովը ընդունեց զինուորական բիւջէն։ Վիճաբանութիւնների ժամանակ հռետորների մեծ մասը ընդգծեց՝ թէ անհրաժեշտ է ունենալ ծովափերը պաշտպանելու համար ուժեղ նաւատորմ։

Ունգարական պատգամաւորութեան մասնաժողովը ընդունեց արտաքին գործերի մինիստրութեան բիւջէն։

—

Բեռլին.—Երեկոյեան կայացան սօցիալ-դեմօկրատ կանանց 27 ժողովներ կեանքի թանգութեան հարցի առիթով։ Հռետորները ասացին, որ թանգութիւնը տանելի չէ ազգաբնակութեան չունևոր դասակարգերի համար, աճում է երեխաների մահացութիւնը. Նրանք պահանջում են բանալ սահմանները միս ներմուծելու համար և միսը քաղաքային վարչութիւնների մէջ վաճառել իսկական գնով։

—

Հռոմ.—«Պօպօլօ-Ռօմանօյի» տեղեկութիւնների համաձայն պատերազմական ծախքերը պատերազմի սկզբից կազմում են 403 միլիոն։

—

Խարբին.—Ռուսաց ոստիկանութիւնը Մեծ պրօսպէկտի վրա գրաւեց զինամթերք, որ տանում էին 51 հեծեալ և 4 հետևակ չին զինուոր։ Զէնքը ուղարկվում էր Սունխուաֆօյ։ Զէնքը յանձնվեց պահեստը, իսկ պահակախումբը զինաթափ լինելով յանձնվեց տեղական դատային։

—

Ցիցիկար.—Չինական զօրամասի հրամանատարը հաղորդում է, որ մոնղոլների հետ Ցիւշէնգունա իշխանութեան մէջ ընդհարվելու ժամանակ սպանվել են աւելի քան 300 մոնղոլ. չինացիք ձեռք են ձգել 70 սայլ և 8000 գլուխ եղջիւրաւոր անասուն։

—

Վաշինգտոն.—Սան-Դօմինգօ ուղարկվեցին 750 ծովային զինուոր։

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 սեպտեմբերի

Կ. Պօլիս.—Ադրիանուպօլսի շրջանում զօրքեր են կենտրոնանում առաջիկայ մեծ զօրախաղերի համար։

—

Բելգրադ.—Սերբիական սահմանապահ զօրախումբը Սմէդերէվում բռնեց աւստրիական մի օֆիցերի և վեց զինուորների արշաւանքի վերաբերեալ բոլոր սարք ու կարգով։ Բռնվածներին ուղարկեցին Բելգրադ։

—

Պօլտավա.—Նահանգի չինական դաշտերում աշխատող բօլգարները և սերբերը առաջարկութիւն ստացան տասը օրվայ ընթացքում գալ Բելգրադ և Սօֆիա։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)
12 սեպտեմբերի

Թաւրիզ.—Ռուսաց գեներալ-հիւպատոսը ստացաւ հաւաքական խնդրագիր Թէհրանի ազգաբնակութեան ներկայացուցիչներից Մահմէդ-Ալի-շահին Պարսկաստան վերադարձնելու մասին։ Միաժամանակ հեռագիրներ են ուղարկված Թագաւոր Կայսրին, անգլիական թագաւորին, Թէհրանի ռուսաց և անգլիական մինիստրներին և պարսկական մինիստրների կաբինետին միջնորդելով վերստին ի գահ կոչել Մահմէդ-Ալիին, որը միայն ընդունակ է վերջ դնելու ներքին խռովութիւններին և երկրի կործանման առաջն առնելու։ Ազգաբնակութիւնը յոյս ունի, որ շահի գալստեամբ և ռուսաց ու անգլիական կառավարութիւնների աջակցութեամբ կարգուկանոնը և հանգստութիւնը կը վերականգնվի։

Սալար-ուդ-Դօվլէն գրաւել է Սեննէն՝ պարսկական Քիւրդստանի գլխաւոր կէտը։

—

Ուրմիա.—Թիւրքաց մի զօրամաս Մօսուլի զօրաբանակի կազմից, որ եկել էր երեք շաբաթ առաջ պարսկական քիւրդերին պատժելու համար, Դիզից վերադառնում է Թիւրքիա։

—

Լոնդոն.—Ստոյգ աղբիւրից տեղեկացնում են, որ այն տարբեր լուրերը, իբր թէ Գրէյի խորհրդակցութիւնները Սազօնովի հետ իրականապէս Պարսկաստանի բաժանմանն են հետամուտ՝ անհիմն են։

ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴ. ՄԵԼԻՔ-ԹԱՆԳԵԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

Թաւրիզ, 8 սեպտեմբերի

Անակնկալների երկիր է Պարսկաստանը. դրանցով և շրջապատված է Ատրպատականի հայութիւնը։ Կազմալուծեալ թեմական պատգամաւորական ժողովի և նոյն ժողովից ընտրված թեմական նոյնպէս կազմալուծեալ խորհրդի ընտրութիւնների համար Կաթողիկոսի կողմից ուղարկված Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանց երէկ, սեպտ. 7-ին, կազմալուծեալ հռչակված 14 անդամներից և 18 ձայնից բաղկացած պատգամաւորական ժողովից ընտրվեց Ատրպատականի թեմի ընդհանուր առաջնորդ. միթէ այս անակնկալ չէ։

Թաւրիզում թեմական պատգամաւորական ժողով և թեմական խորհուրդ կազմալուծված էին, գոյութիւն չունէին մինչև Մելիք-Թանգեանի գալը. այսպէս էր պաշտօնագրել Կարապետ եպիսկոպոս Տէր-Մըկըրտչեան. այս կերպ էր ծանուցել ու յայտարարել առաջնորդարանի օրգան «Թաւրիզի յայտարարութիւններ» շաբաթաթերթը։ Մինչև անգամ ինքը Մելիք-Թանգեան վարդապետը՝ Վեհից ստացած հրամանի վրա՝ ծանուցել էր առաջնորդական փոխանորդին, որ ընտրութեան նախապատրաստութիւններն սկսվեն մինչև իր հասնելը. այդ պատճառով և Թաւրիզի առաջնորդարանի կողմից գաւառները նախօրօք ուղարկվեցին հրահանգներ՝ պատուիրակների ընտրութիւնները կատարվելու համար, որոնք պիտի ընտրեն պատգամաւորներին։ Նոյնիսկ Բերդաթաղում լինելիք ընտրութիւնների համար տրված են տպագիր յայտարարութիւններ, անցած կիրակի օրվայ համար, որ տեղի չունեցաւ. և երկրորդը կատարվելու էր սեպտ. 9-ին, կիրակի։ Այս բոլոր գործողութիւնները ցոյց են տալիս, որ թեմական ժողով և խորհուրդ գոյութիւն չունեն, որոնց համար էլ չէշտել էր Վեհ. Կաթողիկոսն իր կոնդակում և առանձին Մելիք-Թանգեան հայր սուրբին ուղարկել յիշեալ մարմինների ընտրութիւնները գլուխ բերելու համար։

Սակայն և այնպէս հարցը կերպարանափոխ եղաւ, երբ կազմալուծված մարմինները կազմակերպելու պաշտօն ունեցող հայր Մելիք-Թանգեանը հասաւ Թաւրիզ։ Որչափ կարողացայ ստուգել, նորին բարձրապատուութեան անկեղծ խորհուրդներ տուողներ եղան, որ կազմալուծեալ ժողովը անգործ ու անպէտք է եղել անցեալում. թէ նրա անդամները ժողովրդի իսկական ընտրեալները չեն, այլ դաւադրով ընտրվածներ. թէ դրանք ժողովրդի պահանջների համապատասխան չեն. և թէ մանաւանդ իրանց պաշտօնաժամերի ընթացքում յաճախ չեն պատասխանել հրաւէրներին և միշտ բացակայել են՝ հակառակ պաշտօնի նուիրական կոչման և այլն։ Նման խորհուրդները երևի խռովական չը թւացին հայր-սուրբին, և նա, իր համոզմամբ, աւելի կարճ ճանապարհին հետևեց. այն է՝ հրաւէր կարդալ անդամներին ու խնդրել, որ վերստին ընդունեն իրանց պաշտօնը։ Այդպէս էլ եղաւ։ Ամիսներով կոչերին չը լսող և իրանց հրաժարված համարող անդամները նորից բռնեցին իրանց աթոռները. և սեպտ. 7-ին ժողով գումարելով օրակարգի հարց արին թեմական խորհրդի երկու պակաս անդամների լրացումը և թեմակալ առաջնորդի ընտրութիւնը։ Օրակարգի հարցերը իսկոյն անցան վիճաբանութեան հակիրճ բովից, և թեմական խորհրդի երկու պակաս անդամներին ընտրելուց յետոյ՝ ժողովն անցաւ առաջնորդի ընտրութեան գործին։ Այս տեղում երկար-բարակ վիճաբանութիւններ շատ չեղան, և ոչ էլ նախորդի գործերը քննվեցին ըստ պատշաճի. այլ առաջարկվեց Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի թեկնածութիւնը և 14 հոգու (18 ձայնի) ներկայութեամբ, միաձայն ընտրեց նրան Ատրպատականի առաջնորդ։ Հաշւելով պատգամաւորական ժողովի բոլոր անդամների թիւը, 18 ձայնը համարվեց $^2/_3$ մասը, հետևաբար օրինական ըստ թեմական կանոնադրութեան։

Ոչ մի տարակոյս չը կայ, որ այս հապճեպ ընտրութիւնը զուրկ է օրինաւոր հանգամանք ունենալուց և ըստ մեզ բացարձակապէս ապօրինի է, որովհետև ապօրինի է մի ժողով, որի կազմալուծված լինելը հաստատված ու հռչակված է արդէն։

Մենք ոչինչով դէմ չենք բնաւ Մելիք-Թանգեանի ընտրութեան. գուցէ մի օրինական ժողով իր ձայնը նրան էր տալու. մենք դէմ ենք կազմալուծեալ ժողովի ապօրէն գործունէութեան և չենք հաւատում, որ այդօրինակ մի ապօրինի ժողովից ընտրվածը համարվի ժողովրդի ընտրելին և արժանանայ հոգևոր բարձրագոյն իշխանութեան հաւանութեանն ու հաստատութեանը։

Մելիք-Թանգեանի անձը և գործերը ծանօթ չեն ամբողջ ժողովրդին. հարկաւոր էր, որ երկուստեք ճանաչէին միմեանց, ուսումնասիրէին գործն ու գործողին, ու ապա կատարվէր առաջնորդական ընտրութիւն, ինչ որ անհրաժեշտութիւն չէր դեռ ևս։ Թաւրիզի հասարակութիւնը տակաւին չը լսած նախորդի հրաժարումն ու պատճառները՝ յանկարծ լուր է ստանում նորի, անծանօթի ընտրութեան մասին. սա տխուր անակնկալ չէ, ինչ է։

Արդեօք ինչ տպաւորութիւն կը գործէ Թաւրիզի անակնկալը հոգևոր բարձր իշխանութեան վրա և ինչ կը լինի Վեհի կամքը, կը տեսնենք շուտով։ Հայկազուն

ԴԻԱԿՆԱՑԵԱԾ ՍՏՐՈՒԿՆԵՐՈՒ ՇՈՒՐՋ

Քանի խորհրդարանական ընտրութիւնները մօտենան, նոյն համեմատութեամբ Դաշնակցականներու մոլեգնութիւնը սանձարձակութեան կը մօտենայ։ Իրենց օրգանը, որ՝ հակառակ զանազան անուններ փոխելուն՝ կը մնայ դարձեալ սուտասպաս ուխտադրուժը, որուն համար ոչ մէկ առաքինութիւն գովելի և ոչ մէկ սրբութիւն նուիրական է, անլուր ու երկունքի բռնուողի մը ծամծռուն ճիչերը կարձակէ, այս անգամ ոչ թէ իրեն կողմնակիցներ փնտռելու համար, այլ իր երեսէն ինկած դիմակին ներքև պահուած սև դէմքին ամօթալի խաբանումը արդարացնելու յիմարական փորձերուն մէջ մասամբ յաջողելու համար։ Դաշնակցութիւնը, որ որքան խաբեբայ՝ նոյնքան և վատ ու ստորին պնակալէզ մը, գործապարներ համբուրողներու գծած ու արգահատելի խմբակցութիւն մըն է, տեսնելով որ ասկէ առաջ իր արտասանած բարձրագոյն «մեղային»՝ ոչ մէկ լրջամիտ ու հայրենասէր հայ հաւատաց, իր վարժ կեղծաւորի և «ցինիկ» աներեսի վերարկուն վերստին հագած՝ աջ ու ահեակ կը յարձակի, ամբաստանելով հայ մամուլը, թէ... ինչու զինքը դիմակազերծ ընելով հրապարակած է իր ներքին շահամոլ ու փառատենչիկ նպատակները, զորս «ազգասիրութիւն» անսահման անունին ներքև պատսպարած՝ լոկ իր և իր անօթի պնակալէզներուն շահուն և օգտին միայն կը ծառայեցնէր։ Ինչու հայ մամուլը հրապարակեց, թէ սուտ էր Դաշնակցութեան այն պոռոտ յայտարարութիւնը, որուն համաձայն ինք որպէս թէ «ազգային վերագոյն և վսեմ շահեր» փրկելու համար էր որ համաձայնած էր երկրին տիրող կուսակցութեան հետ։ Հայ մամուլը ինչու հրապարակեց, թէ սուտ էր Դաշնակցութիւնը, երբ կըսէր թէ «հայ մէբուսներու քանակը իրեն համար կարևոր չէր». ընդհակառակը երկինք ու երկիր իրար անցուց լոկ իր անարժան խամաճիկները մէբուս ընել տալու համար, որպէս զի մէկ կողմէն ոչ միայն կազմակերպութիւնը ազատէր հովկուլ անօթեներ կշտացնելէ, այլև երբ «տասանորդ»՝ այդ ընտրուած մէբուսներէն ալ բաժին մը, շահ մը ելլէր անտունկին. ու ամենազարշելի և եռակի սուտը կը խօսի, երբ կը յայտարարէ, թէ ինք «աղաներու» խունկ չի ծխեր, մինչ Իթթիհադի յետին անդամին դարշապարները կը լիզէր, լոկ իրենց օրգանին այս ինչ կամ այն ինչ պաշտօնատուէն տարեկան գումար մը սահմանել տալու համար։ Եակի ստախօս, ստորին ու գծուծ դաւաճան, որ հայ ազգին անունով ու արիւնով իր «բաժինները» կանգնեց ու իր «յառաջամարտ» կեղծապարիշտ դերին մէջ դիւկապուտ մը եղաւ այս ազգին գլխուն՝ Ադանայի մխացող աւերակներուն ու քամիասարսուռ մահամերձներուն դեռ կիսաբաց գերեզմաններուն վրայ սակարկութեան մտնելով տիրող կուսակցութեան հետ, որպէս զի իր անօթութենէ փոսացած ստամոքսը պարարէր Թիւրքիոյ հայերուն վզին փաթթելով շղթայ մը, որուն մէկ ծայրը՝ պինդ էր բռնած, ըստ իր կնքած դաշինքին ապահովելու համար իր շահը, միայն իր շահը։ Այո, յետադիմական է, Դաշնակցութեան համար, պոլսահայ մամուլին այն համեստ դասակարգը, որ ամենէն տխուր ու մահասարսուռ օրերուն մէջ ալ շքեղապանծ «Կիւլիւզար» մը չունեցաւ իր տրամադրութեան տակ՝ Մարմարայի վրայ զբօսական պտոյտ մը կատարելու դէպի ֆրանսական նաւը, մինչ ազգին հազարաւոր հայեր բերի ու ճոկանի ներքև հոգի կուտային, և ոչ ալ սպանուելից դաշոյններու ու մահասփիւռ գնդակներու արհաւիրքը ունէր՝ բոլոր «մեծ աղաները» դրամ պահանջելու կամ մուրալու համար «յօգուտ սուրբ գործին»։ Այո, պոլսահայ համեստ մամուլը չունեցաւ այս պանծալի սխրագործութիւնները, բայց նոյնպէս չունեցաւ ոչ Դաշնակցութեան դաւաճան կեղծաւորութիւնը, ոչ անոր ստորին ու ստուէկ պնակալէզութիւնը և ոչ ալ գարշելի ստախօսութեան այն ամօթալի «տակտիկան», որով շաղախուած է այդ կազմակերպութիւնը։

Եւ պոլսահայ մամուլը կը պանծայ իր այս «չունեցաւ»-ներուն վրայ։

Կը փափաքէինք գիտնալ թէ ստուէկ Դաշնակցութիւնը և իր՝ ալ աւելի ստորին ու տխմար օրգանը ինչո՞վ է որ կը պանծայ։ Իրենց յաւէտ դատապարտելի անցեալո՞վ թէ պարզապէս արգահատելի ներկայով։ Եթէ գիտնանք, այն ատեն ալ աւելի որոշ ու յստակ պիտի խօսինք։

(«Լուսարձակ») Ն. Ն. Ֆար

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՅԵՏԱՁԳԵԼ ԹԷ՞ ՈՉ

II *)

Երբ մենք յարեցինք Էջմիածնի Յանձնաժողովի որոշման, որ յայտարարել էր, թէ հոկտ. 13-ին նշանակված տօնախմբութիւնը լինելու է համազգային և հիմնվելու է համազգային դպրոցական ֆօնդ, մենք համոզված էինք, որ այդ Յանձնաժողովը ամեն միջոց գործ կը դնէ, որպէս զի տօնախմբութիւնը, արդարև, համազգային և փառաւոր կերպարանք կրէ, այն ձևով, ինչ մենք էինք առաջարկում։

Սակայն, սրտի ցաւով պէտք է ասել, որ Էջմիածնի Յանձնաժողովը իր կոչման բարձրութեան վրա չը մնաց։ Դրա պատճառը

---

*) Տես «Մշակ» № 202.

կամ գուցէ այն էր, որ Յանձնաժողովի մէջ չը կային գործունեայ, եռանդուն անձինք, և նրա կազմի մէջ մտել էին նոյն իսկ տատանվող և երերուն անձինք, ինչպէս Էգիլեան, որ, լինելով Յանձնաժողովի անդամ, «Հօրիզօնի» մէջ տպել էր մի այնպիսի նամակ, որից մի տեսակ մեղայականի հոտ էր փչում, կամ գուցէ Յանձնաժողովը շատ թեթեւամտաբար վերաբերվեց իր միսսիային։ Բայց իրողութիւնն այն է, որ ամբողջ ամիսներից յետոյ՝ Յանձնաժողովի գործունէութեան միակ արդիւնքն եղաւ կաթողիկոսական մի կոնդակ, այն ևս օգոստոսի ամսին յայտնի դարձած հասարակութեան, մի կոնդակ, որից երևաց, որ Էջմիածինը մտադիր է շատ սահմանափակ շրջանակում կատարել հոկտ. 13-ի տօնը և բնաւ մտադիր չէ նրան համազգային բնաւորութիւն տալ, հակառակ իր՝ Յանձնաժողովի նախորդ յայտարարութեան, հակառակ նոյն իսկ կոնդակի մէջ արտայայտված այն մտքին, թէ այդ տօնը «ամբողջ հայ ազգի քաղաքակրթութեան տօնն է»։

Եւ «ամբողջ հայ ազգի քաղաքակրթութեան տօնը» առաջարկվում էր կատարել միայն դպրոցական հաստատութիւններին, հրաւէր չէր ուղարկվում ոչ հայկական կուլտուրական և լուսաւորական, ոչ հասարակական հաստատութիւններին, ոչ նշանաւոր հայագէտներին և բանասէրներին, ոչ հայկաթոլիկներին ու բողոքականներին։ Նոյն իսկ տօնախմբութեան ծրագիրը մինչև այսօր անյայտ է մնում, և եթէ հայաբնակ քաղաքները, հայ համայնքները, ազգային զանազան հաստատութիւնները մինչև այսօր չեն շարժվում, պատրաստութիւններ չեն տեսնում, որովհետև ամենքը սպասում են խոստացված ծրագրի հրատարակութեան։

Պարզ է, որ Էջմիածնի Յանձնաժողովի այդպիսի անտարբեր վերաբերմունքը, անգործունէութիւնը, տատանումները, ապա «Հօրիզօնի» սկսած յարձակումները Էջմիածնի դէմ, տարածված շշուկները, թէ նրանք որոշել են ստիպել Էջմիածնին ենթարկվել իրանց որոշման, նահանջել, յետ կանգնել, վերջապէս Երևանի թեմի 25 ուսուցիչների ապերասան կոչը՝ ուղղված կաթողիկ. կոնդակի դէմ, և անպատիժ մնալը, և վերջին օրերս Էջմիածնի Յանձնաժողովի մի քանի անդամների (Մեսրոպ եպիսկոպոսի, Մատթէոս վարդապետի, Բագրատ վարդապետի) Թիֆլիս գալը և բանակցութիւններ վարելը Թիֆլիսի Յանձնաժողովի հետ—այս ամենը ստեղծել են մի այնպիսի մթնոլորտ, որ քաջութիւն և յանդգնութիւն է տալիս յուսահատված Թիֆլիսի Յանձնաժողովին և հօրիզօնականներին առաջարկել յետաձգել տօնախմբութիւնը, իսկ հասարակութեան մէջ առաջ է բերում այն խօսակցութիւնը, թէ ուրեմն ներկայ Կաթողիկոսի օրով կոնդակներ գրելը և յետ առնելը նոյնպիսի սովորական երևոյթ է դառնալու, ինչպէս Խրիմեանի օրով։

Եթէ Գէորգ V արձակած չը լինէր կոնդակ—այն ևս իր առաջին ընդհանուր-կուլտուրական բնաւորութիւն ունեցող կոնդակը—դեռ կարելի էր խորհուրդ տալ Էջմիածնին՝ կատարել Թիֆլիսի Յանձնաժողովի խնդիրքը և յետաձգել տօնը։ Եթէ տօնախմբութեան յետաձգման մասին միջնորդութիւն յարուցանէր ոչ թէ մի ինքնակոչ, ոչ մի հեղինակութիւն չունեցող, միակողմանի յանձնաժողով, այլ հայ հասարակութիւնը, հայկական ազգային, կուլտուրական հաստատութիւնները, այդ դէպքում ևս կարելի էր խորհուրդ տալ Էջմիածնին՝ յետաձգել տօնակատարութիւնը։ Բայց այդպիսի միջնորդութիւններ դեռ հայ հասարակութիւնը մինչև այժմ չը յարուցել։ Կայ և մի այլ հանգամանք, որ կարող էր հարկադրել Էջմիածնին յետաձգել տօնախմբութիւնը—Թիւրքահայոց այժմեան աղէտալի վիճակը, եթէ միայն Կ. Պօլսի պատրիարքը, որ կարգադրութիւններ է արել հոկտ. 13-ի տօնը ամեն տեղ կատարելու, միջնորդէր այդ մասին։

Բայց առանց այդ կարեւոր միջնորդութիւնների՝ ընդունել Թիֆլիսի Յանձնաժողովի և մի քանի հօրիզօնականների խնդիրքը, զիջել նրանց, այդ զիջումը, անկասկած, այն տպաւորութիւնը կը գործի ամբողջ հայ ժողովրդի վրա, որ Կաթողիկոսը տեղի տուեց մի քանի հօրիզօնականների և մի քանի թայֆայական ուսուցիչների պահանջների և յոխորտանքի առաջ։ Սա է իրականութիւնը, սա է անքօղարկեալ ճշմարտութիւնը։ Հէնց հօրիզօնականների դիտաւորութիւնն էլ ոչ թէ տօնակատարութեան յետաձգումն է, ոչ թէ «տօնը համազգային դարձնելու» ցանկութիւնն է, ոչ, այլ առիթ ունենալ պարծենալու, թէ «տեսաք, մենք ասացինք, որ կը ստիպենք Էջմիածնին զիջել և նա զիջեց. իմացէք և ըստ այնմ ձեր հաշիւներն արեցէք»։

Անկասկած այս է լինելու Կաթողիկոսի անդրանիկ կոնդակի յետս կոչման ընդհանուր տպաւորութիւնը։ Ինչքան էլ պոռան հօրիզօնականները, ինչքան էլ Մեսրոպ եպիսկոպոս, Մատթէոս վարդապետ չըմեղանքներ, որոշ նկատումներ ներկայացնեն, բայց փաստը այն է մնալու, որ Էջմիածինը չը կարողացաւ յարգել տալ իր Կաթողիկոսի կոնդակը և զիջեց, նահանջեց մի քանի հօրիզօնականների և իր իրաւասութեան ներքոյ գտնվող 25 ապերասան ուսուցիչների առաջ։

Այդ առաջին զիջողութիւնը անելուց յետոյ, խրախուսված հօրիզօնականները նոր զիջումներ են պահանջելու, այն է՝ որ լուծվի Էջմիածնի Յանձնաժողովը, որ տօնակատարութիւնը չը կատարվի Էջմիածնում, որ գործի գլուխ կանգնեն Լէօները, Զարգարեանները, Գր. Վարդանեանները և tutti quanti, իսկ այդ ամենի հետևանքը լինելու է այն, որ հայ հասարակութիւնը, հայ ժողովուրդը, հայ ինտելիգենցիան անտես է անելու և՛ Էջմիածինը, և՛ Թիֆլիսի Յանձնաժողովը, և կամ չէ մասնակցելու տօնին, կամ ինքն է կազմակերպելու։ Որովհետև պարզ է, որ ոչ ոք մի կոպէկ անգամ չի հաւատայ թէ գրական ֆօնդի համար և թէ դպրոցական ֆօնդի համար այնպիսի անձանց, որոնք այսօր մեր մէջ շարունակողն են «Հայրիկեան ֆօնդի» մաքրազարդման գործի։

Մեր եզրակացութիւնը։ Եթէ յոբելեանի տօնախմբութիւնը յետաձգվում է մի քանի ամսով, բոլորովին աւելորդ է, որովհետև 2—3 ամսում ոչ մի բան առաջացնել չէ կարելի։ Եթէ նա յետաձգվում է՝ զիջելու համար Թիֆլիսի Յանձնաժողովի և մի քանի հօրիզօնականների ու ուսուցիչների սպառնալիքի առաջ, դրանով Էջմիածինը մի անգամ ընդ միշտ կը պարզի հայ հասարակութեան առաջ իր բարոյական ֆիզիօնոմիան և ցոյց կը տայ, թէ ինչ կարելի է սպասել ներկայ Կաթողիկոսից. դա կը լինի այն գլխաւոր փորձաքարը, որ պէտք է բանայ ժողովրդի աչքը՝ ապագայի մասին։

Բայց եթէ յոբելեանի տօնախմբութիւնը յետաձգվի մի ամբողջ տարով, այն է՝ մինչև եկող 1913 թ. հոկտ. 13-ը, և այն պայմանով, որ 1) նա անպատճառ տօնվի Էջմիածնում 1913 թ. հոկտ. 13-ին, 2) կենտրոնական կարգադիր բիւրօն լինի Էջմիածնում, 3) տօնակատարութիւնը լինի համազգային, այն է՝ կենտրոնական Յոբելեանական Յանձնաժողովի, իբրև պատւոյ Յանձնաժողովի (Comité d'honneur), անդամակցութեան հրաւիրվեն բոլոր նշանաւոր հայագէտները (նոյնիսկ օտարազգիները), բոլոր նշանաւոր հայ բանասէրները, Մխիթարեան Միաբանութեան երկու ճիւղերի և աւետարանական հայերի ներկայացուցիչները, 4) տօնին մասնակցելու հրաւիրվեն ազգային-եկեղեցական-կուլտուրական բոլոր հաստատութիւնները—այդ դէպքում միայն մենք կողմնակից ենք յետաձգման։

Մենք այլևս այս խնդրին չենք դառնալու։

Հ. Ա.

ԳԻՒՂ ԱՄԱՐԱՆՈՑԻ ԿԵԱՆՔԻՑ

VII

Ամարանոցի «պաշտելի» հիւրերը գնացին, իսկ հեռանալու, քաշվելու ոչ մի տրամադրութիւն կամ նշան ցոյց չը տուեց մեր... «տկլոր-դաշնիկը»։

«Տկլոր-դաշնիկ»... դարաւոր նախապաշարված ժողովրդի ստեղծագործող ֆանտազիան նրան այսպէս է պատկերացնում. մի բարձրահասակ, յաղթանդամ, սարսափահար դիմագծերով, ահարկու հայեացքով տղամարդ՝ շորերը հանած, Ադամի մերկութեամբ, գիշերները համարձակ շրջում է գիւղի ամեն մի անկիւն և սրտաճաք անում պատահական անցորդին։

Դիւրահաւատ սնոտիապաշտ գիւղական տգէտ մասսան ահ ու սարսափի մէջ ընկաւ։

Արևը մայր մտնելուց յետոյ գիւղի նոյն իսկ ամենաբազմամարդ, աղմկոտ փողոցներում դադարում էր կանանց ու երեխաների սովորական անց ու դարձը։

Մի քանի օրից յետոյ պարզվում է օրվայ «տկլոր-հերոսի» ով լինելը և բուն իրողութիւնը։

Հոգեկան հիւանդութեամբ մշտապէս տառապող, բայց չափազանց խաղաղ, անվնաս բնաւորութեամբ մի ուսանող «դաշնիկ» մի օր, իրիկնապահին, իր սովորական ընթացքով և հագուստով պատահում է անտառից ոչ հեռու մի ծանօթ գիւղացու. վերջինս անչափ վախեցած, լեղապատառ ընկնում է գիւղը և խտացրած գոյներով պատմում է իր հարևաններին այս հասարակ, անմեղ դէպքը։ «Բերնից բերան՝ հազար բերան»—ասում է ժողովրդական առածը։ Այստեղից էլ ծագում է առնում վերոյիշեալ առասպելը։ «Տկլոր-դաշնիկն» էլ հեռացաւ... Գիւղը վերջապէս ազատ շունչ քաշեց հանգստացաւ։

Համատարած վախը ցրվեց և բոլորովին մոռացվեց...

Անմեղ մանուկները փրկվեցին սարսափելի «դաշնիկի» տկլոր ուրուականից։

—

Համատարած ամայութիւն, անելանելի տաղտկութիւն և սպանիչ ձանձրոյթ...

Մտնենք անտառը։ Մի քանի օր առաջ ամեն մի ծառի, ամեն մի թփի տակից վախկոտ նապաստակի նման խլշկոտալով գլուխները դուրս էին հանում հանգստութիւն որոնող սիրահարվածները, իրար փայփայող նորապսակները կամ սովորական զբօսանքի եկած վախկոտ ամարանոցաւորը։

Այժմ անտառը լուռ, բնական դրութեան մէջ է։ Միայն երբեմն լսվում է սոված ագռաւի կռկռոցը, անօգնական, անպաշտպան թռչնիկի օրհասական ճիչը... աշնանային քամու մելամաղձոտ վայնը և ծառերի տխուր տերևաթափը...

Իսկ լեռնային սառնորակ աղբիւրներից սկիզբն առնող, երփներանգ ծաղիկներով և թաւշանման կանաչներով շրջապատված անտառի վտակը, յիշելով իր մօտիկ երանելի անցեալը, սիրելի հիւրերը, նրանց երգն ու պարը... գինին և սէրը, անչափ զգում է նրանց կարօտը, տրտնջում է ու մրմնջում.

Շուրջս դատարկ...
Շուրջս տխուր,
Վա՜յ, վի՜շշ, վա՜յ, վի՜շշ...
Ո՞ւր կորան, ո՞ւր...

Այո, դատարկութիւն, անծայր, անվերջ հոգեմաշ տխրութիւն է թագաւորում թէ անտառում, թէ դաշտում և թէ գիւղի միակերպ կեանքում։

Հոգեկան-մտաւոր-գեղարուեստական բաւականութիւններից, անհատական հաճոյքներից և կուլտուրական տարրական պահանջներից խսպառ զուրկ, անապատականի վիճակին դատապարտված գաւառական ինտելիգենտ գործիչը իր կեանքի ազատ ժամերը ինչպէս անց կացնի, ինչով մխիթարվի։

Միթէ նա մի օր պէտք է հաշտվի, համակերպվի և հեշտութեամբ ձուլվի նահապետական գիւղի նեխված մթնոլորտում։

Մ. Ղազարեան

Մեծ-Ղարաքիլիսա

ՆԱՄԱԿՆԵՐ ՆԱՒԹԱՇԽԱՐՀԻՑ

XV

Ուրախալի երևոյթ

Բագու, 5 սեպտեմբերի

Բագուն իսկական ժողովրդական հիմնարկութիւններով ու ձեռնարկութիւններով այնքան աղքատ է ներկայումս, որ ամեն մի նոր գործ, այդ նպատակներով սկսված, ուրախութեան մի թրթիռ է անց կացնում մարդու երակներով։

Մենք շատ հիմնարկութիւններ ենք ունեցել, որոնցից մի քանիսի բեկորները մինչև այժմ էլ մնում են, բայց նրանցից և ոչ մէկը բուն ժողովրդի, հասարակ դասակարգի համար չէ եղել, չը նայած որ այդ անուան տակ՝ ժողովրդի համար են իբր թէ ստեղծվել նրանք։

«Կօշկակարի պատիւը կօշկակարը կը հասկանայ»—ասում է պարսկական առածը։

Որքա՜ն ճիշդ է այդ։

Ժողովրդի անունով և ժողովրդի համար ստեղծված բոլոր հիմնարկութիւններն ու ձեռնարկութիւններն էլ երբէք իրանց նպատակներին չեն հասել և քայքայվել են միայն շնորհիւ այն բանի, որ ինքը ժողովուրդը ոչինչ մասնակցութիւն չէ ունեցել նրանց մէջ։

Մեր բուրժուազիան ու ինտելիգենցիան միայն վէպերից ծանօթ լինելով բուն ժողովրդի, հասարակ դասակարգի ցաւերի ու կարիքների հետ՝ անկարող են եղել և—այդ շատ պարզ է ու հասկանալի—մի այնպիսի հիմնարկութիւն ստեղծել, որը կարողանար այդ դասակարգերի իսկական, իրական պահանջներին բաւարարութիւն տալ։

Նրանց ստեղծած բոլոր հիմնարկութիւնները էլ միայն ժամանցի տեղ են եղել նրանց համար, իսկ այդպիսի գործերը յարատև լինել չեն կարող։

Ահա այդ պատճառով էլ ուրախալի է, որ այսօր մի ժողովրդական գործի են ձեռնարկում ժողովրդի ծոցից դուրս եկած, ժողովրդի ցաւերով տանջված և նրա կաթով սնված մի խումբ երիտասարդներ, որոնց շատ լաւ յայտնի են նրա ցաւերն ու կարիքները, և բուռն եռանդով ասպարէզ են նետվում իրանց ոյժերը նրա օգտին ծառայեցնելու համար։

Բագւում, երիտասարդների մի փոքրիկ խմբակ, ոչ բարձր ուսման տէր և ոչ էլ ճոճռան ֆրազների սիրահար դիպլոմաւորներ, այլ հասարակ, շատ հասարակ մարդիկ, որոնք իրանք էլ սնվել և ապրել են ժողովրդի ցաւերով, հիմնում են ներկայումս զուտ ժողովրդական մի հրատարակչական ընկերութիւն, որը նպատակ ունի հրատարակելու զուտ ժողովրդական էժանագին գրքոյկներ և թերթեր։

Ընկերութիւնը ներկայումս արդէն կազմակերպվում է, պայմանագիրը կազմված է սովորական փայերի սիստեմայով, իւրաքանչիւր փայը կամ բաժինը արժէ 5 ր., և շատ շուտով կը սկսէ իր գործունէութիւնը։

Ընկերութեան ամենագլխաւոր նպատակներից մէկն է հրատարակել մի ամենօրեայ էժանագին ժողովրդական թերթ Բագւում, որի համարը պէտք է արժենայ 2 կոպէկ միայն և պէտք է ցրվէ ժողովրդի ամենալայն խաւերում։

Առաջին հայեացքից շատ թեթև ու չնչին է երևում այդ գործը, բայց որքան բարձր ու վեհ է նրա նպատակը և որքան մեծ գործեր կարող է անել նա։

Եւ որքան ուրախալի երևոյթ է այդ Բագւում, ուր ամեն ոք և ամենքը միանգամայն տարված իրանց նեղ, անձնական շահերով՝ բարձի-թողի են արել ամեն մի հասարակական գործ։

Կատարեալ աջողութիւն ենք ցանկանում այդ նոր սկսվող գործին, որը մեծ դեր կարող է կատարել Բագուի հեղձուցիչ մթնոլորտում։

Վաղարշակ Թումանեան

ԱՍՏՐԱԽԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՇՈՒՐՋԸ

—

Վերջին ամիսներս, կարծէք թէ, մամուլի զբաղմունքի առարկայ է դարձել Աստրախանի թեմական դպրոցի հարցը։ Այս հարցը հրապարակ նետվեց այն ժամանակվանից, երբ ազգիս նորընտիր Վեհափառ Հայրապետը Պետերբուրգում եղած միջոցին, ի միջի այլոց, խօսել էր նաև մեր թեմական դպրոցի մասին։ Նրանից յետոյ՝ Աստրախանի տեղական ռուս լրագիրները արտատպեցին «Куб. Край» թերթից կաթող. դիւանապետ Բագրատ վարդապետի խօսակցութիւնը նոյն դպրոցի մասին, որ նա ունեցել էր, կարծեմ, Արմաւիրում այդ թերթի թղթակիցներից մէկի հետ։

Թեմական դպրոց ունենալու իրաւունքի և բացման հարցը մի կողմ թողած՝ այժմ խօսվում է այն բանի մասին, թէ ո՞րտեղ պէտք է բացվի այդ դպրոցը—Աստրախանում թէ թեմի այլ քաղաքներից մէկում. և մեծ մասամբ այդ առթիվ արտայայտված կարծիքները յանգում են այն եզրակացութեան, որ Աստրախանում չը պէտք է լինի այդ դպրոցը։

Միանգամայն համամիտ լինելով տեղի վերաբերմամբ արտայայտված վերոյիշեալ կարծիքներին, գտնում ենք սակայն, որ շատ զգուշութեամբ և մեծ տակտով պէտք է առաջ քաշել այս հարցը, որովհետև խօսելով և բանակռիւ մղելով մամուլի էջերում այս հարցի մասին՝ կարելի է որ կողմերը աւելի պերճախօս փաստեր բերելու նպատակով ընկնեն չափազանցութիւնների մէջ և դրանով անգիտակցաբար արջի ծառայութիւն մատուցանեն թեմական դպրոց ունենալու իրաւունքի սկզբունքային խնդրին...

Ոչ ոք չէ վիճում այն բանի մասին, որ Աստրախանի թեմին թեմական դպրոց հարկաւոր է, ուրեմն և ամեն միջոց ու ջանք պէտք է գործ դնել ամենից առաջ այդ իրաւունքը ստանալու և այժմեան Աստրախանի «թեմական» անունը կրող երկու պատրաստականներով այդ ողորմելի դպրոցը ազատելու իր խղճալի դրութիւնից...

Այժմեանից տեղի մասին վիճողները և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԻ ԱՄԻՍ ԹԱՒՐԻԶՈՒՄ*)

(Ուղեւորական ակնարկներ)

II

Այն ամենը, ինչ որ ես լսեցի ինձ այցելողներից այդ օրը և հետևեալ օրերը, երբ ես սկսեցի փոխադարձ այցելութիւններ տալ, երբ սկսեցի պտտել բազարները, շփվել թուրքերի հետ, նրանց պատմածներն ևս լսել, իմանալ տեղական հասարակ ժողովրդի կարծիքը, բերին ինձ այն եզրակացութեան, որ եթէ անցեալ տարի դեկտեմբերին ռուսաց զօրքը վրա չը հասնէր, Թաւրիզը բոլորովին քարուքանդ կը լինէր և տեղական ազգաբնակութիւնը մատնված՝ սոսկալի աղէտների։

— Այն կեանքը, որ մենք քաշել ենք այս վերջին 6—7 տարին, Աստուած մեր ամենաոխերիմ թշնամուն քաշել չը տայ,—ահա ինչ էր լսում ես ամեն կողմից՝ և հայից, և թուրքից, և պարսկից։—Հազիւ երեկոյ էր դառնում, մենք ստիպված էինք ամրացնել մեր տները և պինդ փակվել. յաճախ նոյն իսկ ցերեկները փողոցներում շրջել անկարելի էր. առևտուրը դադարել էր, կենսական մթերքները սաստիկ թանգացել, խանութները, Թաւրիզի այն խանութները, որոնք մի ժամանակ տրաքվում էին ընտիր կերպասներով, թաւշէ, շալ, մետաքսէ թանգագին կերպասներով, գորգերով, թալանվեցին. ով կարողացել էր վաղօրօք փախչել, ազատել էր գլուխը. վայը եկել-տարել էր մեզ, որ մնացել էինք փակված մեր տներում, շուարած, չիմանալով՝ կենդանի կը մնանք վաղը, թէ ոչ։ Դեռ հայերը, գտնվելով այն թաղերում, ուր ապրում են ռուսական, անգլիական, ֆրանսիական հիւպատոսները, մի կերպ պաշտպանված էին. բայց անտանելի էր խեղճ պարսիկ ժողովրդի վիճակը։

— Բայց միթէ քաղաքում տէր չը կար, միթէ մաշրութէնների ձեռքին չէր կառավարութիւնը։

— Ոչ. տէրը նա էր, ով առաւօտը շուտ էր վեր կենում։ Թաւրիզի մի քանի թաղերը գտնվում էին մուսթաբիդների (միապետականների), Ռահիմ-խանի և այլոց, իսկ միւս թաղերը մաշրութէների (սահմանադրականների) ձեռքում, որոնց ղեկավարները էին Սաթթար-խանը և Բաղըր-խանը, այդ «ժողովրդական հերոսները»։ Արդ, այդ երկու կողմերը կռւում էին. երբեմն մի կողմն էր յաղթում, երբեմն միւս կողմը. յաղթող կողմը անմիջապէս աւարի, թալանի էր ենթարկում իր տիրած շրջանի բազարները, խանութները, տները։

— Բայց միթէ սահմանադրականներն ևս այնպէս էին վարվում, ինչպէս բէակցիոնէրները։

— Աւելի վատթար. նրանք նոյնպէս էին թալանում, կողոպտում, ինչպէս Ռահիմ-խանի ձիաւորները։ Երևակայեցէք, երբ այս վերջերս Թեհրանից հրաման եկաւ, որ Սաթթար-խանի այստեղ, Թաւրիզում ունեցած տները խուզարկեն, ցուցակագրեն գոյքը, կահ-կարասիները և աճուրդով ծախելով՝ գոհացումն տան այն մարդկանց, որոնց խանութները թալանել է, գիտէք քանի-քանի հազար գորգեր, խալիչաներ, ընտիր կերպասների հազարաւոր թոփեր դուրս հանեցին նրա տներից և աճուրդով ծախեցին։ Շատերը ճանաչեցին իրանցից թալանված ապրանքը։

— Ասացէք, խնդրեմ, շատերը ձեզանից, անշուշտ, ճանաչում են Սաթթար-խանին. յիրաւի, հարցնում էր նա, թէ ինչ է սահմանադրութիւն, ի՞նչ է դեմոկրատիզմ. յիրաւի պաշտպան էր ժողովրդական իրաւունքների։ Եւ առհասարակ ո՞վ էր նա և ինչո՞վ կարողացաւ իշխանութիւն ձեռք բերել։

Խօսակիցներս քմծ-քմծ ծիծաղեցին։

— Սաթթար-խանը, Բաղըր-խանը նոյնքան հասկացողութիւն ունեն սահմանադրութեան, դեմօկրատիզմի, ժողովրդական իրաւունքների մասին, որքան մենք չինական լեզուի մասին։ Մի մարդ, որ տգէտ է, անգրագէտ և իր ամբողջ երիտասարդութիւնը անց է կացրել խեղճ ժողովուրդը կեղեքելով, ծեծելով, տանջելով, միթէ նա կարող է սահմանադրական լինել։ Նա առաջ վալիահդ (գահաժառանգ) Մահմէդ-Ալիի (յետոյ շահ) մօտ ձիաւոր էր և իբրև ձիաւոր, չափար վալիահդի, ուր և գնում էր, կեղեքում էր ժողովուրդը. նա ոստիկան էր, որ ամբողջ ժամանակ ապրում էր ժողովրդի հաշւով։ Երբ Մահմէդ-Ալին շահ դարձաւ, նրան հետը չը տարաւ Թէհրան և դրանով գրգռեց նրա վրէժխնդրութիւնը։ Նա եղել է երկար ժամանակ ղարղա ղարաբաղցի քեալբալայի Սուլէյմանի որդի՝ Աղիլ-խանի գիւղերի վրա. իսկ յայտնի է, թէ ղարղան գիւղացու ոխերիմ թշնամին է, կեղեքիչը։ Երբ ծագեց յեղափոխութիւնը, նա օգուտ քաղեց հանգամանքներից, խումբ կազմեց և ժողովրդին օգնելու դիմակի տակ սկսեց մի կողմից էլ ինքը կեղեքել ժողովուրդը։ Գիտէք նա ինչ էր անում։ Դաշնակցականները, որոնք միացել էին նրա հետ, սովորեցրել էին նրան, թէ ով ժողովրդի հակառակ է, նա կոչվում է մուսթաբիդ (բէակցիոնէր)։ Եւ ահա Սաթթար-խանը իր կերպով հասկացաւ և օգտվեց այդ լօզունգից. նա որոշեց դրամ շորթել բոլոր հարուստներից, վաճառականներից այն պատրուակով, թէ նրանք մուսթաբիդներ են։ Եւ ահագին հարստութիւն դիզեց։ Երէկվայ չափարը, որ ամսական 10 ր. ռոճիկ հազիւ ունէր, մի քանի ամսվայ ընթացքում դարձաւ հարիւր հազարների, թանգագին քարերի, ոսկեղէնի, արծաթեղէնի և պալատների տէր։

— Բայց ինչպէս էր կատարվում այդ կեղեքումը։

— Շատ պարզ կերպով. նա կազմել էր բոլոր հարուստների, վաճառականների ցուցակը. ամեն երեկոյ ուղարկում էր մէկի տունը իր զինուորներից մէկին կամ երկուսին, սպառազինված, մեծ փափախը գլխին։ Դուռը խփում էին որոշ ձևով. հաջին կամ վաճառականը հասկանում էր, թէ ով է եկել, վազում էր դուռը։ «Հաջի,—լսում էր նա,—սարդարը (Սաթթար-խանը իրան այդպիսի տիտղոս էր տուել) հրամայեց, որ վաղը մինչև կէսօր 1000 կամ 2000 թուման պատրաստած ուղարկէք իրան. այլապէս գիւրջի բօմբիստները կը գան»։ (Սաթթար-խանի խմբի մէջ կային մի քանի վրացիներ, որոնց ամեն մէկին վճարում էր ամսական 25 թուման և որոնց պաշտօնը ռումբեր պատրաստելն էր։ Ի՞նչ անէր հաջին, վաճառականը. կամ անմռունչ հնազանդում էր, եթէ պատրաստ փող ունէր, կամ գնում աղաչում-պաղատում էր, որ նուազեցնեն որոշված գումարը. երբ աղաչանք, պաղատանք չէր օգնում, խեղճը կիսագնի ծախում էր ունեցած-չունեցածը և օձիքն ազատում։

— Իսկ հայերի հետ ինչպէս էին վարվում։

— Էհ,—պատասխանեց մի պարսիկ,—ձեր հայերը երջանիկ են. նա չէր համարձակվում հայերին ձեռք տալ, վախենալով ռուսաց հիւպատոսարանից։

Սակայն, ինչպէս ստուգեցի հայերից, սրանք շատ էլ երջանիկ չէին. երջանիկ էին, համեմատած պարսիկների հետ։ Հայերի կեղեքումը դաշնակցականները իրանց էին վերապահել։ Այն դերը, որ կատարում էին Սաթթար-խանը և Բաղըր-խանը թուրքերի վերաբերմամբ, կատարում էին Դաշնակցութեան երկու լիդէրները, մինը՝ Ստեփանեան անունով մի լուսանկարիչ, Սիբիրից, տաժանակիր աքսորից փախած, միւսը՝ Սամսոն-խան անունով, նոյնպէս Սիբիրից փախած ոճրագործ։ Այդ երկուսը—առաջինը՝ Ստեփանեանը՝ Թաւրիզում, իսկ երկրորդը՝ Սամսոն-խանը՝ Սալմաստում—ուղղակի տերրոր էին տարածել հայերի վրա։ Երկուսն էլ եկել էին չքաւոր դրութեան մէջ, առանց կոպէկի գրպաններում։ Կեղծ լուսանկարիչ Ստեփանեանը շուտով նոյնիսկ սեփական տան տէր դարձաւ Թաւրիզում, իսկ Սամսոն-խանը Սալմաստում ուղղակի շահութիւն էր անում։ Վայ նրան, ով հակառակէր, ըմբոստանար նրա հրամաններին. Նա հրամայում էր այս-ինչ մարդուն արձակել իր կնոջը, եթէ կինը դուր էր եկել իրան կամ իր դաշնակցական զինուորներից մէկին. նա հրամայում էր այս կամ այն վաճառականին՝ վճարել այսքան գումար. և եթէ հրամանը չէր կատարվում, սոսկալի վրէժխնդրութեան և պատժի էր ենթարկվում։ Յայտնի վաճառական Ջիբրայիլ Բուդաղեանը, Արզումանեանների առևտրական տունը, որոնք սկզբում դիմադրեցին նրան և չը կամեցան վճարել փրկանքներ, ենթարկվեցին անգութ և վայրենի, ասիական վրէժխնդրութեան. Բուդաղեանների լայնատարած այգու բոլոր ծառերը արմատով կտրատել էին, որպէսզի արմատից չորանան և այլևս չը ծաղկեն. Արզումանեանների տները կողոպտվեցին, թանգագին գորթեմական դպրոցը ոչ Աստրախանում բացելու կողմնակիցները կապում են նրա հետ նաև առաջնորդի և կօնսիստորիայի տեղափոխութեան խնդիրները. դրանք հարցեր են, որոնց լուծումը դժուար թէ շուտ ժամանակում աջողվի. դրանք միայն կողմնակի կերպով կարող են խանգարող հանդիսանալ բուն խնդրին...

---

*) Տես «Մշակ» № 202.

Գալով այն բանին՝ թէ որտեղ պէտք է լինի թեմական դպրոցը, պարզ է, որ այժմեան պայմաններում նա Աստրախանում չէ կարող մնալ, ի նկատի ունենալով մի կողմից Աստրախանի հայ գաղութի աստիճանաբար նուազելը, միւս կողմից էլ վատառողջ կլիման, ամեն տարի մեզ մօտ հիւր եկող ժանտախտն ու խոլերան և այլ համոզեցուցիչ փաստեր, որոնց մենք մանրամասն առաջ կը բերենք իր ժամանակին, երբ հոգևոր ծայրագոյն իշխանութեան ձեռքին կը լինի Աստրախանի թեմական դպրոցի հաստատված կանոնագրութիւնը, որը վաղուց ներկայացված է մինիստրութեանը...

Իսկ այժմ Աստրախանի թեմին հարկաւոր է թեմական դպրոց, և տիրող օրէնքն էլ չէ պնդում որ անպատճառ դա պէտք է լինի առաջնորդանիստ քաղաքում. ուրեմն և պէտք է ամեն կերպ աշխատել տալ այդ թեմին դպրոց՝ մի կողմ թողնելով առ այժմ տեղի մասին վիճելը...

Ս. Ք. Ասլանեանց

Աստրախան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայ Կոմս Վօրօնցով-Դաշկովը սեպտեմբերի 12-ի երեկոյեան մեկնեց Տաբախմէլա գիւղը Կօջորի մօտ, այնտեղ գտնվող զօրքերի վարժութիւնները դիտելու համար։

◆ Սեպտեմբերի 10 ին կայացաւ Թիֆլիսում պօլիտեխնիկում հիմնելու հարցի գլխաւոր կոմիտէի նիստը, ուր նախագահ սենատոր Վատացին լիազօրեց քաղաքագլուխ Ալ. Խատիսեանին յայտնել, որ Թագաւոր Կայսրը բարեհաճել է հաստատել մինիստրների խորհրդի կարծիքը, որ պաշտպանեց նաև Կովկասի Փոխարքայ կոմս Վօրօնցով-Դաշկովը, այն պայմանով՝ որ պօլիտեխնիկումը իր չորս բաժիններով կառուցվի ու կարգաւորվի տեղական միջոցներով։ Շինութեան կառուցումը կը սկսվի եկող տարվանից։

◆ Էջմիածնից տեղեկացնում են, որ պատրաստութիւններ են տեսնվում սեպտ. 30-ի համար, երբ կատարվելու է միւռոնօրհնութեան հանդէսը։

◆ Ներսիսեան դպրոցի վարչութիւնը մեզ խնդրեց հերքել տեղական ռուս թերթերի տպած լուրը՝ թէ իբր սեպտեմ. 9-ին տեղի է ունեցել նոր շինութեան օծման հանդէսը։ Ինչպէս մենք կասկած էինք յայտնել, ճշդվում է որ ոչ մի օծում չէ եղել և ռուս թերթերին մոլորեցրել է ռեպօրտեօրներից մինը։

◆ Մի խումբ անձինք, ղեկավարութեամբ մեր թերթի խմբագիր Հ. Առաքելեանի, դիմում են կատարել պատշաճաւոր իշխանութեան՝ թոյլատրելու գումարել մի ժողով, ուր քննութեան պէտք է առնվի Թիւրքիայի հայերի վիճակը և քուէարկվի բողոք հայկական կոտորածների առիթով։

◆ Այսօր տեղի կունենայ Այխէնվալդի դասախօսութիւնը Տօլստոյի գրուածքների մասին։

◆ Այխէնվալդի երկրորդ դասախօսութիւնը նշանակված է վաղը Չեխովի մասին։

◆ Պետական Դումայի նախկին անդամ Տիմոշկինը ներկայումս Թիֆլիսում ղեկավարում է Պետական Դումայի ընտրութիւնների առիթով տեղիս ռուս հայրենասէրների ընկերութեան կազմած նախընտրական ժողովները։ Հայրենասիրական ընկերութիւնը այս անգամ ոչ մի բլոկ չէ կազմում որևէ խմբակցութեան հետ և հանդէս է եկել ընտրութիւններին բոլորովին անկախ։

◆ Թիֆլիսի նահանգապետը քաղաքային վարչութեանը ուղարկեց այն նոր հրահանգները, որոնցով տեղի են ունենալու Պետական Դումայի ընտրութիւնները։

◆ Թիֆլիսում այս անգամ Պետական Դումայի ընտրութիւնների հետաքրքրութիւնը սակաւ է, համեմատած նախկին ընտրութիւնների ժամանակի հետ։ Թիֆլիսի նահանգի կողմից առաջարկվող թեկնածուներ Ջախէլիձէի և Անդրօնիկովի դէմ կայ ուժեղ կուսակցութիւն։ Ոչ մի նախընտրական ժողով, խորհրդակցութիւն համարեա տեղի չունի։

◆ Գանձակից հաղորդում են, որ Պետական Դումայի անդամութեան համար հաւանական թեկնածու ընդունում են Ալէք. Բալանթարին։

◆ Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձու Ռուդոլֆը մտադիր է մեկնել ռուսական մի քանի քաղաքները՝ ծանօթանալու նպատակով այնտեղի պօլիտեխնիկումների դրութեան և նախահաշիւների հետ։

◆ Վերադարձաւ Թիֆլիս արձակուրդից վաճառականների աւագ Ա. Ն. Միլեանը։

◆ Չը նայած որ սեպտեմբեր ամիսն է, բայց և այնպէս Թիֆլիսում ցերեկները բաւական շոգ է։

◆ Ներկայումս Թիֆլիսի էլեքտրաքարշի էլեքտրական կայարանում գործիքներից մինը փչացել է, որի պատճառով և էլեքտրական ոյժը պակասել է։ Դրանից և քաղաքում երթեւեկում են սահմանված թւից պակաս վագոններ։ Էլեքտրաքարշի ընկերութեան վարչութիւնը կտրուկ միջոցներ է ձեռք առել փչացած մասերը վերանորոգելու և որոշված թւով վագոններ գործի հանելու համար։

◆ Բագուից մեզ գրում են, որ այնտեղ ամսիս 8 ի երեկոյեան ժ. 8-ին, Մալականսկի այգու մօտ, Մ. Սարուխանեանի «Սարուխան» շոգենաւի ղեկավար Ս. Ք. Աթայեանը ատրճանակի գնդակով սպանել է մի երիտասարդ բօլգարի, որը յայտնի Առևտ. Տան «Ստուկէն և Ընկ.» գրասենեակում վարում էր գրասենեկապետի պաշտօն։ Սպանութեան պատճառը հետևեալն է։ Բօլգարը շարունակ հետևելիս է եղել Աթայեանի օրինաւոր կնոջը և զանազան շրջաններում միշտ ակնարկներ է անելիս լինում վերջինիս հասցէին։ Կինը շարունակ գանգատվելիս է եղել ամուսնուն, որը անկարող լինելով յետ կասեցնել բօլգարին, ստիպված է լինում դիմել քաղաքապետին. սա պատասխանում է, թէ այդ իր գործը չէ։ Աթայեանը ապա դիմում է տեղիս ռուս ծխատէր քահանային (Աթայեանի կինը ռուսադաւան է լինում), որը նոյնպէս ոչնչով օգնել չէ կարողանում։ Աթայեանը երկրորդ անգամ դիմում է քաղաքապետին, որը այս անգամ հրաւիրում է բօլգարին և խորհուրդ տալիս հանգիստ մնալ, սպառնալով հակառակ դէպքում քաղաքապետութեան շրջանից հեռացնել։ Բայց բօլգարն այս անգամ սպառնում է Աթայեանին, որը ստիպված է լինում ատրճանակ կրելու թոյլտւութիւն ձեռք բերել։ Անցնում է մի քանի ամիս։ Եւ ահա սեպտ. 8-ին, երբ մի խանութի առաջ կանգնած՝ Աթայեանը խաղող գնելիս է լինում, բօլգարը մօտենում է նրան և աշխատում վէճի բռնվել, բայց Աթայեանը խուսափում է և հեռանում. սակայն բօլգարը իր երկու ընկերոջ հետ կառք նստած՝ պտտելով գտնում է Աթայեանին Մօլօկանսկի այգու մօտ և կառքից իջնելով մօտենում Աթայեանին. սա, նկատելով որ հակառակորդը ձեռքը գրպանը տարած՝ վատ մտադրութիւն ունի, հանում է ատրճանակը և առաջարկում չը մօտենալ. բայց երբ տեսնում է, որ բօլգարն աւելի է մօտենում, ինքն երկու քայլ յետ կանգնելով առաջին գնդակը արձակում է գետնին, կամենալով այդպիսով զգուշացնել բօլգարին, ապա երկրորդ և երրորդ գնդակներով էլ սպանում է նրան։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վրաց Դրամատիկական Ընկերութեան խմբի ներկայացումները Թիֆլիսում սկսվելու են սեպտեմբերի 16-ին։ Այդ օրը կը խաղացվի սովորականի նման Դ. Էրիսթավի «Սամշօբլօ» պատմական պիէսը։ Ներկայ սէզօնի ընթացքում խաղացվելու են մի քանի նոր ինքնուրոյն պիէսներ, որոնց թւում նաև Շիուկաշվիլիի «Մթիս զղապարի» (Լեռան առակը) հետաքրքրական պիէսը։ Մօտ օրերս կը խաղացվի նաև Շիրվանզադէի «Եւգինէ» դրաման։ Դերասանական խմբի մէջ ներկայ սէզօնի ընթացքում մտնում են վրաց դերասաններից ամենալաւ ոյժերը, որպիսիքն են՝ Տասօ Աբաշիձէ, Ալէքսանդրա Կարգարեթելի, Ա. Դաւիթաշվիլի, Ա. Բիքօձէ, Ն. Ջավախիշվիլի, Է. Ջերքէզիշվիլի, պ. պ. Վ. Աբաշիձէ, Գ. Վալէրիան, Գ. Գեդէվանով, Ի. Զարդալիշվիլի, Վլ. Ալէքսի-Մեսխիեվ, Մեսխի Կօնստանտին, Վ. Շալիկաշվիլի և այլք։ Խումբը ունենալու է սեփական երգեցիկ խումբ։ Խմբի ռեժիսօրներ են հրաւիրված Վլ. Ալէքսի-Մեսխիեվը և Վալ. Շալիկաշվիլին։ Այս սէզօնին կը խաղացվեն առաջին անգամ նոր օրիգինալ պիէսներ, թւով 7 հատ։ Ներկայացումները տեղի կունենան շաբաթը երկու անգամ, այն է հինգշաբթի և կիրակի օրերը։ Կանոնաւոր ներկայացումներից զատ շաբաթը մէկ անգամ կը կազմակերպվեն գրական-երաժշտական երեկոյթներ։

◆ Պետերբուրգում ապրող իշխ. Միքելաձէն, որի անունը տրվում է Պետ. Դումայի անդամութեան համար Քութայիսի նահանգից, ներկայիս իր գործակալների միջոցով տարածում է յիշեալ նահանգում մի պասկվիլ-բրօշիւր վրաց առաջադէմ տարրերի դէմ ուղղված։ Այդ հողի վրա ներկայումս բանավէճ է սկսված վրաց մամուլում։ Քութայիսում հրատարակվող «Դիլա» առաջադիմական-դեմօկրատ թերթը մի շարք ֆէլիէտօններով պաշտպանում է վրաց դեմօկրատ տարրերի պատիւը իշխ. Միքելաձէի յարձակումներից։ Բրօշիւրը կրում է «Վին խար շէն» (Ո՞վ ես դու) խորագիրը։

◆ Կիրակի սեպտեմբերի 16-ից Թիֆլիսում կը սկսէ լոյս տեսնել առաջադիմական-դեմօկրատ ուղղութեամբ վրացական մի նոր շաբաթաթերթ «Կլդէ» («Ժայռ») անունով։

◆ Բացի Թիֆլիսից ներկայ սեզօնում վրաց դերասանական խմբեր են կազմակերպված Քութայիսում և Բաթումում, որոնք մօտերս կը սկսեն իրանց ներկայացումների շարքը։

◆ Շուտով լոյս կը տեսնեն վրաց գրող և հրապարակախօս հանգուցեալ Իլիա Ճավճավաձէի գրուածքները նոր և ճոխ հրատարակութեամբ, ընտիր թղթի վրա, բազմաթիւ նկարներով։

◆ Վերջերս Թիֆլիսում ձերբակալվեց աքսորավայրից ինքնակամ կերպով վերադառնալու համար վրաց թերթերի աշխատակից ուսանող Ի. Գոգէբաշվիլին։ Ներկայումս նա ազատված է բանտից և մօտերս մեկնելու է իր աքսորատեղին, Չելեաբինսկ։

◆ Ամառային ամիսներից յետոյ, երէկ Թիֆլիսում տեղի ունեցաւ Վրաց Գիւղատնտեսական Ընկ. առաջին նիստը։

◆ Վրաց «Սախալխօ Գազէթի» թերթի 697-րդ համարում տպված է մի քննադատական, որի հեղինակը գովեստով է խօսում վրաց հայազգի բանաստեղծ Բ. Ախօսպերէլի (Բ. Աղայեան) մասին, վերջինիս հրատարակած նոր բանաստեղծութիւնների առիթով։

◆ Մօտ մի ամիս է, ինչ Քութայիսում սկսել է լոյս տեսնել «Դիլա» («Առաւօտ») անունով առաջ.-դէմօկրատ օրաթերթը։ Այս թերթի և «Սախալխօ Գազէթի» լրագրի միջև սկսվել է խիստ բանակռիւ սկզբունքային հարցի վրա։

ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ԹԵՐԹԵՐԻՑ

◆ *Քաղցկեղը Գերմանիայում.*—Նայելով վերջին տեղեկութիւններին, Գերմանիայում քաղցկեղից մեռնում են ամեն տարի մօտ 50,000 մարդ։

◆ *Ուսուցչական ինստիտուտում.*—Մօսկվայի ուսուցչական ինստիտուտում այս տարի մտնել է ցանկանում ահագին բազմութիւն։ Մրցական քննութիւն տուող 270 մարդուց ընդունվել են ընդամենը 53-ը։ Այս տարի բացվելու է երրորդ զուգընթաց դասարան։

◆ *Քաղաքային նոր հիմնարկութիւն.*—Սեպտեմբերի 6-ին Մօսկվայում հիմք է դրվել մի մեծ անկելանոցի՝ ընկնաւորների (эпилептикъ) ու ապուշների համար՝ յայտնի բարեգործ Մեդվեդնիկօվների միջոցներով։

◆ *Կրօնական գործ.*—Ուղղափառ գեղջկուհի Ա. Գալիկօվան մկրտել է տուել իր մանուկը կաթօլիկ եկեղեցու ծէսով, ամուսնացած լինելով, քաղաքացիական պսակով, կաթօլիկի հետ, որի համար ենթարկվել է դատի։ Գալիկօվայի ասելով՝ նա իրաւունք ունէր այդպէս մկրտել տալու, քանի որ ինքը պատրաստվում էր ընդունել կաթօլիկութիւն, որի համար և ստացել է թոյլտւութիւն։ Շրջանային դատարանը դատապարտել էր Գալիկօվային կէս ամիս բանտարկութեան։ Իսկ դատական պալատը արդարացրեց դատապարտվածին։

◆ *Ինցիդէնտ Մեծ թատրոնում.*—Սեպտեմբերի 3-ին Մօսկվայի Մեծ թատրոնում «Րիգօլէտտօյի» ներկայացումը, Սմիրնովի ու Բակլանովի մասնակցութեամբ, աչքի ընկաւ հետևեալ ինցիդէնտով։ Սմիրնովը երգում էր հերցօգի պարտիան «Րիգօլէտտօյում»։ Վերջին գործողութեան միջոցին, երբ Սմիրնովը պատրաստվում էր երրորդ անգամ կրկնել «Գեղեցկուհու սիրտը» արիան բարձրից լսվեց մի կնոջ ձայն՝

— Բաւական է։

Վիրաւորված տենորը մօտեցաւ բեմի առաջամասին (րամպա), ձեռքերը խաչեց, գլուխ կռծքին և, մոռանալով որ կատարում է հերցօգի դերը, բողոքող ունկնդրուհուն ի պատասխան՝ աղաղակեց.

— Շնորհակալ եմ։

Ու յետոյ, չը փոխելով իր դիրքը և շարունակ նայելով այն կողմը, որտեղից լսվեց «ձայնը», կրկնեց արիան, վերջացնելով այն քաղաքավարական ժեստով։

Այս դէպքի մասին տեղեկութիւն է ուղարկված կայսերական թատրոնների կառավարչին։

◆ *Ռուսաց հոգևոր սեմինարիա Նիւ-Եօրկում.*—Այս աշնանը Նիւ-Եօրկում բացվում է ռուս սեմինարիա, միայն քիչ փոփոխված ծրագրով։ Աստուածաբանական առարկաներից չի աւանդվի պատմութիւնը, կը մտցվի ամերիկական օրէնսգիտութիւն, պատմութիւն ու Ամերիկայի աշխարհագրութիւն։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Ժողովրդական Տան Թատրոնում

Ներկայ սեպտեմբերի 9-ից սկսած Ռուսաց Դրամատիկական Կրուժօկը սկսել է իր սէզօնային ներկայացումները։

Այս սէզօնին հրաւիրված է թէ խաղալու և թէ ռեժիսեօրութեան պաշտօնով կայսերական թատրոնների արտիստ Բաղօլինը։

Առ հասարակ պիտի ասել, որ Ռուսաց Դրամատիկական Կրուժօկը ջանք չէ խնայում տարէ-տարի աւելի լաւ կազմակերպված հիմունքների վրա դնելու իր ներկայացումների գործը՝ հետաքրքրական դարձնելով թէ իր ռեպերտուարը և թէ խաղացողների անսամբլը։

Չորեքշաբթի, սեպտեմբերի 12-ին, Դրամատիկական Կրուժօկի սէզօնային երրորդ ներկայացումն էր։ Խաղում էին Լէօնիդ Անդրէևի հանրածանօթ «Дни нашей жизни» պիէսը։

Օլգայի (Օլ-Օլ) պատասխանատու դերում հանդէս էր եկել տ. Լէվիցկայա, որը, պէտք է խոստովանել, սպասածից աւելին տուեց թէ դերի խորը ուսումնասիրութեամբ և թէ հոգեկան յուզումների ու ալեկոծումների վերապրումներով։ Դրանից աւելին սպասել մի փորձառու սիրողուհուց՝ անկարելի էր։ Սխալված չենք լինի՝ եթէ ասենք, որ այդ երեկոյ Լէվիցկայա մեզ վրա թողեց համարեա նոյն հաճելի տպաւորութիւնը, ինչ որ ստացել էինք սրանից 3 տարի առաջ նոյն բեմի վրա՝ նոյն դերում՝ օր. Ի. Քալանթարի հմտալից խաղից։

Օնուֆրիի դերում «կայսեր. թատրոնների արտիստ» Բաղօլին մեզ չը գոհացրեց. նրանից աւելին կարելի էր պահանջել իբրև պրօֆէսիօնալ և անուանի դերասանից։ Նոյն դերում մենք տեսել ենք Զինօվիէվին, որը իր խաղով թողել է աւելի ուժեղ տպաւորութիւն։

Ուսանող Գլուխովցեվի (Կօլեա) դերում Մարիեվ վատ չէր՝ որպէս խորտակված սիրուց ճնշված ու հիասթափված մի ուսանողի հոգեկան տանջանքների արտայայտիչ։

Միանգամայն տիպիկ էր տ. Ֆօն-Շուլման Օլգայի՝ գինեմոլ և իր 18-ամեայ ուսանողուհի և կամազուրկ աղջկանը վաճառքի հանած՝ զզուելի մօր դերում։ Մանաւանդ աչքի էր ընկնում տիկնոջ շատ համապատասխան գրիմը։

Օսիպով, ինչպէս միշտ, այս անգամ ևս գինեմոլ օֆիցէրի դերում նպաստաւոր տպաւորութիւն թողեց և արժանացաւ ծափահարութիւնների։

Իբրև սիրողներ՝ վատ չէին և միւս դերակատարները։

Ընդհանուր առմամբ՝ այդ երեկոյ ներկայացումը թողեց լաւ տպաւորութիւն։ Նկատելի էր ռէժիսեօրական հմուտ ձեռքի ներկայութիւնը բոլոր գործողութիւնների ընթացքում։

X.

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Լ. ՄԱՆՈՒԷԼԵԱՆ ԵՒ ՆՐԱ «ՌՈՒՍԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ» *)

II

Չը գիտեմ ինչ ընդունելութիւն է գտել մեզանում գոնէ նրա վերջին աշխատութիւնը՝ «Ռուսահայ գրականութեան պատմութիւնը»։

Այն սիստեմատիկ բարձր ուսումը, այն ընդարձակ մտաւոր զարգացումը և գրական պատրաստութիւնը, որը ստացել է շնորհալի հեղինակը, երաշխաւորութիւն է նրա ձեռնհասութեան։

Եւ արդարև Լ. Մանուէլեանի «Ռուսահայ գրականութեան պատմութիւնը» անհամեմատ աւելի է խնամքով կազմված, քան հրապարակի վրա ուրիշ եղածները։

Սկսած 1909 թւից, իւրաքանչիւր տարի նա լոյս է ընծայել մի-մի պրակ, այնպէս որ մինչև այսօր տուել է 4 պրակ և մի հատ էլ «Գրական Նմուշների» ժողովածու, հրատարակված այս տարի, իբր «Ռուսահայ գրականութեան պատմութեանը» յարմարեցրած։

«Գրական Նմուշների» ընտրութիւնը կատարված է ճաշակով և նրա մէջ մտած նիւթերը պատմութեան դասաւանդութիւնը դարձնում են դիւրամատչելի։

I պրակը սկսվում է հայ կեանքի մտաւոր վերածնութեան նախօրեակից՝ նախապատրաստական շրջանով, որի եռանդուն մշակներն են եղել Ալամդարեան, Թաղիադեան, Աբովեան և լուսաւորութեան կենտրոնները՝ Ներսիսեան դպրոց, Լազարեան ճեմարան, Աղաբաբեան ուսումնարան, որոնք և պատրաստում են վերածնութեան նախօրեակը։

II պրակը ամփոփում է իր մէջ վերածնութեան գործիչներին, սկսած 50-ական թւականի վերջերից։ Գրականութեան համարեա բոլոր ճիւղերը—հրապարակախօսութիւն, բանաստեղծութիւն, թատրոն—սերտ կերպով կապված են եղել կեանքի հետ։ Եւ ահա հրապարակախօս Ստ. Նազարեանի հետ ձեռք ձեռքի տուած՝ մենք տեսնում ենք տքնելիս բանաստեղծ-հրապարակախօս Ռափայէլ Պատկանեանին, Նալբանդեանին, բանաստեղծ Շահազիզին, դրամատուրգ Սունդուկեանին։ Դրանք բոլորն էլ ռուսահայ վերածնութեան ռահվիրաներն են։

III պրակը նուիրված է այն կուլտուրական նուաճումներին և ազգային ինքնաճանաչութեանը, որոնք սկսվում են 70-ական թւականներից և որոնց գլխաւոր դարբնողը եղել է մեծ հրապարակախօս Գ. Արծրունին։ «Մշակի» դերն ու շկօլան նոյնպէս արժանավայել տեղ է գրաւում ներկայ աշխատութեան մէջ։

Այդ շրջանի ամենաուժեղ և խոշոր գրական դէմքը Րաֆֆին է, ապա Պռօշեանը։ Թատրոնն էլ տուել է Ադամեանին։

IV պրակը սկսվում է 80-ական թւականներից և ամփոփում է իր մէջ հայ մամուլը, «Մուրճ» ամսագիրը և մեր ժամանակակից աչքի ընկնող բանաստեղծներին։

Այս պրակը կարօտ է թեթև ուղղումների, բայց խոշոր, էական լրացումների, որովհետև ժամանակագրական կարգից դուրս են ընկել ու չեն յիշվել նորագոյն աչքի ընկնող վիպագրողները՝ ինչպէս Շիրվանզադէ, Ահարոնեան, Մուրացան, Ատրպետ, Նար-Դոս, Շահրիար, Փափազեան և այլն։

Երգիծաբանութիւնը մասնաւորապէս չունի իր ուրոյն տեղը և յատուկ ներկայացուցիչներին, ինչպէս Ռ. Պատկանեանին, Կոստ. Մելիք-Շահնազարեանին և մի երկու ուրիշները. մանաւանդ որ հրապարակախօսական ու գեղարուեստական գրականու-

---

դերը կտոր-կտոր եղան։ Սամսոն-խանը Սալմաստում և՛ դատաւոր էր, և՛ իշխան, և՛ առաջնորդ, և՛ քահանայ, և՛ դահիճ։

— Բայց ինչու հայերդ չէիք գանգատվում, ինչու չէիք բողոքում։

— Ում, և որտեղ. չէ՞ որ բողոքողները անմիջապէս կը հռչակվէին իբրև մատնիչներ և դաւաճաններ և ապա տէրրօրի կենթարկվէին։

— Բայց ինչու չէր բողոքում առաջնորդը. ինչու զգաստութեան չէր հրաւիրում։

— Նա չէր կարող. նա հետևում էր քաղաքականութեան «մի կալ հակառակ չարին»։ Նրա աչքի առաջ էր Եղիշէ վարդապետ Մուրադեանի օրինակը։

— Ի՞նչպէս։

— Եղիշէ վարդապետ Մուրադեանը, երբ առաջնորդ էր, չէր քաշվում Սամսոն-խանի պէս մարդկանց և դաշնակցականների դէմ քարոզել եկեղեցու բեմից, մերակել, շանթահարել նրանց ոճրագործ գործունէութիւնը։ Հետևանքն այն եղաւ, որ նա ստիպվեց հրաժարվել թեմից և հեռանալ։ Նոյն վիճակն, անշուշտ, սպասում էր և Կարապետ եպիսկոպոսին։

— Այժմ մինթէ նոյնը շարունակվում է,— հարցի ես այլայլած։

— Աստուած ոչ անէ. այժմ ազատված ենք, այժմ հանգիստ ենք, այլևս չը կան Ստեփանեաններ և Սամսոն-խաններ։

— Ո՞վ ազատեց ձեզ այդ պատուհասներից։

— Ռուսաց զօրքի գալուստը։ Հէնց որ իմացվեց, որ ռուսաց զօրքը Ջուլֆայից շարժվել է, այդ ոճրագործները զգացին, որ պէտք է փախչել։ Եւ լաւ արին, որովհետև յետոյ յայտնվեց, որ թէ Ստեփանեանը, թէ Սամսոն-խանը Պետրոս խանի հետ միասին նոյնպէս դատապարտված են կառավարական դատարանի կողմից։

— Բայց մինթէ ռուսաց զինւորական դատարանը դատում էր առհասարակ դաշնակցականներին և ֆէդայիներին։

— Ո՛չ, նա կալանաւորում, դատում և պատժում էր միայն նրանց, որոնց վերաբերմամբ հաստատ փաստեր էր ձեռք բերել, թէ մասնակցել են ռուսաց զօրքերի վրա յարձակվելու դաւադրութեան։ Այդպիսի անձինք, ինչպէս երևում է, դաշնակցականներից երեք հոգի էին՝ Պետրոս-խանը, Ստեփանեանը և Սամսոն-խանը, որոնց դատարանը և դատապարտել էր կախաղանի։ Առաջինին թէև զգուշացրողներ եղել էին, որ փախչի, բայց նա յոյս դնելով այն բանի վրա, որ ինքը պարսից պետական պաշտօնեայ է, չէր փախել. Ստեփանեանը, որ օսմանեան անցագիր էր ձեռք բերել, փախաւ-մտաւ բէստ օսմանեան հիւպատոսարանի դրօշակի ներքոյ, իսկ Սամսոն-խանը՝ Սալմաստից գիշերով փախել էր Թիւրքիա իր ընկերներով, իր հետ տանելով և Սալմաստի հայ ժողովրդից հաւաքած դպրոցական տուրքը։

— Ուրեմն այժմ Ստեփանեանը օսմանցոց հիւպատոսարանում բէստ է։

— Այո, դեկտեմբեր ամսից ի վեր. երկրի նախնական սովորութեան համաձայն, նա անձեռնմխելի է, ուստի և ռուսները ձեռք չեն տալիս և թէև պահանջել են թիւրքաց հիւպատոսից, բայց սա մերժել է, քանի որ բէստի իրաւունքը նուիրական է համարվում։ Ռուսներն ևս չեն պնդում, բայց խիստ հսկողութիւն են սահմանել. եթէ Ստեփանեանը ոտքը դռնից դուրս դնի, անմիջապէս կարող է ձերբակալվել և առաջնորդվել դէպի կախաղան։

— Ձեր կարծիքով,— հարցրի ես թէ հայերից և թէ պարսիկներից,— ռուսաց զօրքի ներկայութիւնը անհրաժեշտ է անդորրութեան և կարգի համար։

— Ոչ մի տարակոյս չը կայ. եթէ այսօր կեանքը սկսել է մտնել իր նօրմալ պայմանների մէջ, եթէ այսօր բազարները, խանութները բացվեցին, առևտուրը, վաճառականութիւնը վերսկսել է, մեծ ճանապարհների վրա այլ ևս աւարառութիւններ չեն կատարվում, եթէ այսօր մենք կարողանում ենք մեր տանը նստել և մի կտոր հալալ հաց ուտել, այդ պարտական ենք միայն ռուսաց զօրքի ներկայութեանը և ներկայ նահանգապետ Շուջա-ուդ-Դովլէին։

— Բայց չէ՞ որ Շուջա-ուդ-Դովլէն ինքնակոչ նահանգապետ է. նրան չէ նշանակել կենտրոնական կառավարութիւնը, և նա, որքան կարդացել եմ լրագիրներում, միապետական է, ուրեմն հակառակորդ ներկայ «սահմանադրական» կոչված կառավարութեան։ Ի՞նչպէս եղաւ, որ այժմ Թէհրանի կենտրոնական կառավարութիւնը նրան ճանաչում է Ատրպատականի ընդհանուր-նահանգապետ։

— Կառավարութիւնը չէր կարող չը ճանաչել, քանի որ ժողովուրդը նրան ճանաչում է իրողապէս և քանի որ ռուսները ճանաչում են նրան իբրև ընդհանուր-նահանգապետ։

Ես հետաքրքրվեցի աւելի մանրամասն իմանալու Շուջա-ուդ-Դովլէի մասին։ Եւ այն, ինչ որ ինձ հաղորդվեց, ինչ որ ես յետոյ ինքս ստուգեցի զանազան տեղերից, իմ խօսակցութեան ժամանակ ռուսաց և ֆրանսիական հիւպատոսարանների պաշտօնեաների հետ, այնքան հետաքրքրական է, որ առանձին կանգ կառնեմ նրա վրա, մանաւանդ որ դրան կից է դեկտեմբերեան դէպքերի պատմութիւնը։

Հ. Առաքելեան

---

*) Տես «Մշակ» № 201.

թեան հետ կողք կողքի, չէ մոռացված նըկարչութիւնը, թէև Այվազովսկին չէ յիշված։

Բանաստեղծներին, իմ կարծիքով, պէտք էր աւելի սրոշ դասաւորել. բաժանելով նըրանց երկու խմբակների՝ մէկում կը մըտնէին մաքուր պօէզիայի ներկայացուցիչները, իսկ միւսում՝ հասարակական տենդենցներով բանաստեղծները։

Դա աւելի կը դիւրացնէր այս կամ այն բանաստեղծի դէմքի բնորոշումը։ Նոյնպէս, թէ ի՛նչ աղբիւրներից է օգտվել «Գրական պատմութիւնը» կազմելիս, հեղինակը պէտք է յիշատակէր, եթէ միայն օգտվել է ոչ բուն աղբիւրից։

Կարելի էր մի քանի ուրիշ նկատողութիւններ էլ անել, սակայն նրանք էական կարևորութիւն չունեն և այնքան աննշան են ձեռնարկի առաւելութիւնների առաջ, որ, ամենայն իրաւամբ, կարելի է լռութեամբ անցնել, մանաւանդ որ ինքը՝ հեղինակն էլ անշուշտ նկատած կը լինի տպագրութիւնից յետոյ և, ուրեմն, յաջորդ հրատարակութիւնը կը տայ ուղղված և նոր լրացումներով աւելի ամփոփ դարձրած։

Այս տեսակ մի կերտուածքի ամենամեծ արժանաւորութիւնը նրա հիմնական ուղղութիւնն է, կերտելու ձևն է, մեթօդն է։

Ամենաընդունված ու նպատակայարմար ձևը դպրոցական ձեռնարկների համար ներկայ դէպքում պատմական-քննադատական մեթօդն է։

Գրականութեան պատմութիւնը կազմողները այդ մեթօդը, իբրև բնական, մեծ մասամբ, համարում են ամենից պիտանելին։

Այդ մեթօդով է ղեկավարվել ռուսաց XIX դարի գրականութեան պատմութեան հեղինակներից մէկը, Վ. Սավօդնիկը, որի ձեռնարկները այսօր ընդունված են ռուսաց ոչ միայն միջնակարգ, այլև բարձրագոյն դպրոցներում։

Լ. Մանուէլեանը ևս ընտրել է այդ մեթօդը։

Գրական շրջանների բաժանումը, գրականութեան զարգացման ու անկման պայմանների լուսաբանութիւնը, դէմքերի բնորոշումը և նրանց ստեղծագործութիւնների վերլուծութիւնը Մանուէլեանը կատարել է հմտօրէն, բարեխղճաբար, պատմագրողին վայել անաչառութեամբ, նիւթի լուրջ ուսումնասիրութեամբ և լիակատար տիրապետութեամբ։

Բաւականաչափ որոշ ու ցայտուն են դուրս եկել օրինակ՝ Աբովեանի, Ռաֆ. Պատկանեանի, Նալբանդեանի, Շահազիզի, Սունդուկեանի, Րաֆֆիի և Պռօշեանի դէմքերը և նրանց բնորոշելու մասին յիշատակված նիւթերն ու տեղեկութիւնները անհամեմատ ընդարձակ են, քան ուրիշների մօտ։

Առհասարակ Մանուէլեանի ռուսահայ գրականութեան պատմութեան մէջ գրական իւրաքանչիւր դէմք, գրական-կուլտուրական ամեն մի գործօն ստացել է իր օբեկտիվ լուսաբանութիւնը և ամեն մի ուշագրաւ գեղարուեստական երկ՝ իր վերլուծութիւնն ու գնահատութիւնը։

Թէ այդ տեսակէտից և թէ իր կանոնաւոր ու սիստեմատիկ կազմութեամբ, ճոխութեամբ, իսկ, որ գլխաւորն է, անաչառ վերաբերմունքով դէպի այս կամ այն գրողի ստեղծագործութիւնը, առաջինն է նա հրապարակի վրա մինչև այսօր եղածներից։

Անաչառութիւնը ես շեշտում եմ, որովհետև այդ պահանջը միշտ հնչել է մեր իրականութեան մէջ ու լսելու չէ երբէք, առաւելապէս ներկայ օրերում, երբ ղեկավար ընդունել միայն ճշմարտութիւնը, միայն արժանաւորութիւնը գործի, աշխատութեան, և խօսել նրանց մասին առանց կրքի, առանց միտումների, առանց հեղինակի անձը նկատի առնելու՝ հազուագիւտ երևոյթ է դարձել։

Այդ յատկանիշները գալիս են աւելի ևս բարձրացնելու Լ. Մանուէլեանի ներկայ աշխատութեան արժէքը։

Իբրև ամենաարժանաւորը եղած ձեռնարկների մէջ, բոլոր սրտով ցանկանում ենք նրան ընդարձակ ընդունելութիւն։

Լ. Դանիէլեան

ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

1) «Քանի մը խօսք (Սանասարեանի տեղափոխութեան առթիւ)», Կարին, 1912 թ., էջ 9. 2) «Ցայտագիր Սանասարեան վարժարանի (երկրորդական և մասնագիտական) ի Սեբաստիա», 1912—1913 թ. դըպրոցական տարեշրջանի, Կ. Պոլիս, 1912 թ., էջ 7. 3) «Տեղեկագիր Թիֆլիսի Մարիամեան-Յովնանեան օրիորդաց դպրոցի տընտեսական և ուսումնական մասի 1910 թ. սեպտ.—1911 թ. սեպտ.», Թիֆլիս, 1912 թ., էջ 48. 4) «Կանոնադրութիւն Թիֆլիսի Զուբալօվի անուան ժողովրդ. տան հայերէն լեզուով ներկայացումներ կազմակերպող հայկական դրամատիկ խմբակցութեան», Թիֆլիս, 1912 թ., էջ 21. 5) «Ամփոփում ատենագրութեան երեսփոխանական ժողովի Ամերիկայի Հայաստանեայց Առաքելական Սբ. Եկեղեցւոյ գումարեալ յՈւստր 12 նոյեմ. 1911 թ.», Բոստոն, 1912 թ., էջ 16. 6) «Կայէնի ճանկերում», դրամա 5 գործ., Աւետիք Առաքելեանի, Նոր-Նախիջևան, 1912 թ., էջ 69, գ. 50 կ.։ 7) «Հուսաբեր» շաբաթաթերթի №№ 26, 27 և 28, Կահիրէ, 1912 թ.։ 8) «Տաճար» շաբաթաթերթի № 30, Կ. Պոլիս, 1912 թ.։ 9) «Կոչնակ» շաբաթաթերթի №№ 31, 32, 33, 34, 35 և 36, Նիւ-Եօրկ, 1912 թ.։ 10) «Աւետաբեր» շաբաթաթերթի №№ 34, 35 և 36, Կ. Պոլիս, 1911 թ.։

ՄԱՄՈՒԼ

«Կաւռն» թերթը, որի մէջ տպված էր 25 ապերասան ուսուցիչների իր տեսակի մէջ եզակի յայտարարութիւնը Կաթողիկոսի կոնդակի դէմ, անկորրեկտ և խարդախիչ ձևով յեղաշրջում է մեր յօդուածի իմաստը։ Նա այնպէս է բացատրում, որ իբր թէ մենք ասել ենք, թէ հասարակական այս կամ այն խաւերը իրաւունք չունեն բողոքել իշխանութեան այս կամ այն կարգադրութեան դէմ։

Զէ որ հէնց Ֆրանսիայում,—առարկում է «Կաւռն» թերթի խմբագրութիւնը,—լուսաւորութեան մինիստրութեան կարգադրութիւնների դէմ ըմբոստանում և բողոքում է ուսուցչական միութիւնը. չէ որ ամենադեմօկրատիկ երկիրներում, յանուն ընդհանուր դիսցիպլինայի, լինում են հազար ու մի կարգադրութիւններ, որոնց դէմ սակայն բողոքում են հասարակական այս և այն խաւերը։ Եւ սակայն այլ է պաշտօնեան, որոշ իշխանութեան իրաւասութեան ենթարկված պաշտօնեան, այլ է հասարակական այս կամ այն հաստատութիւնը, հասարակական այս կամ այն խաւերը։ Եթէ լուսաւորութեան մինիստրութիւնը Ֆրանսիայում կամ Անգլիայում մի որևէ կարգադրութիւն անէ, այդ կարգադրութեան դէմ ամենայն իրաւունք ունէ բողոքելու այս կամ այն կուլտուրական, հասարակական, գիտնական հաստատութիւնը, մամուլը, և մինիստրութիւնը երբէք պրետենզիա չի ունենայ նրանց դէմ. բայց երբ մինիստրութեան որոշ կարգադրութեան դէմ ըմբոստանան իր դպրոցներում պաշտօնավարող ուսուցիչները, նրանց 24 ժամում կարձակէ։

Դա չէ նշանակում, թէ դեմօկրատիկ Ֆրանսիան ճնշում է իր ստորադրեալների անհատական արտօնութիւնը կամ կարծիքը. ոչ, այդ ստորադրեալները կարող են իրանց բողոքները, իրանց դըրտունջները յայտնել իրանց պատշաճաւոր իշխանութեան, այլ ոչ դուրս գալ հրապարակօրէն մամուլի մէջ ու պրօվակացիօնական ձևով ըմբոստութեան հրաւիրել և միւս ուսուցիչներին։ Այդպիսի դէպքում ոչ միայն ֆրանսիական, այլև անգլիական, ամերիկական և ամեն մի քաղաքակիրթ երկրի իշխանութիւն սաստիկ պատժի կենթարկէ այդպիսի ըմբոստ ցուցարարներին։

Երևանի թեմի 25 ուսուցիչները եթէ դժգոհ էին Կաթողիկոսի կոնդակից, պէտք դիմէին իրան Կաթողիկոսին, իրանց թեմական տեսչի կամ առաջնորդի միջոցով, այլ ոչ թէ լրագրի մէջ ըմբոստութեան օրինակ ցոյց տային։ Թէ այդ 25 ուսուցիչներն իրանք զգացել են իրանց վարմունքի ապերասանութիւնը և անվայելչութիւնը, դրա ապացոյցն այն է, որ քաջութիւն չեն ունեցել ստորագրել իրանց անունները։

Նոյնպէս առարկութեան չէ դիմանում այն կարծիքը, թէ թեմական տեսուչ Ռաշմաճեանը և առաջնորդական փոխանորդ Խորէն եպիսկոպոսը ոչ մի պարտաւորութիւն չունեն կատարելու այդ դէպքում։ Դա դարձեալ ցոյց է տալիս, թէ «Կաւռնը» տարրական պարտաճանաչութեան գաղափարին անգամ ծանօթ չէ։ Երբ որևէ մի դպրոցում պատահում է մի դէպք, մի անկարգութիւն, երբ որևէ մի ուսուցիչ մի անկարգութիւն է գործում, կարգապահութեան զանցառութիւն է անում, ում պարտքն է վերականգնել կարգը և կարգապահութեան հրաւիրել։ Եթէ հայոց ծխական-եկեղեցական դպրոցներում գործվող անկարգութիւնների պատասխանատու չը ճանաչվեն այն թեմական տեսուչները և այն առաջնորդները, որոնց իրաւասութեան ենթարկվում են այդ դպրոցները, այդ դէպքում, երբ նրանք անտարբեր են մնացել դէպի գործված անկարգութիւնը, ուրեմն, ըստ «Կաւռնի», պէտք է այդ դպրոցներում անարխիա տիրէ միայն և ուրիշ ոչինչ։

Խորհուրդ կը տայինք «Կաւռնին» զբաղվել աւելի տեղական հարցերով և ոչ այնպիսի խնդիրներով, որոնց մէջ նրա անձեռնհասութիւնը ակնյայտնի է։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Ախալքալաք, 5 սեպտեմբերի

«Մշակի» № 181-ում Աչիկը իր «Թէ այդպէս, լաւ է երբէք» նամակով հաղորդել է մի շարք անճիշդ տեղեկութիւններ տեղումս կայացած ժողովրդական դասախօսութիւնների առիթով։

Կ. Հ. Բ. Ընկ. Ախալքալաքի ճիւղի վարչութիւնը, «ցանկանալով ընդառաջ գնալ տեղիս խաւար մասսայի կրթական գործին և տալ նրան տեղեկութիւններ զանազան գիտութիւնների մասին», ձեռք է բերել թոյլտուութիւն, կազմել է սեկցիա և ապա անցել դասախօսութիւններին։ Տեղիս հասարակութիւնը քանի գնացել, աւելի վառ հետաքրքրութիւն է ցոյց տուել դէպի դասախօսութիւնները. հետզհետէ աւելացել է ունկնդիրների թիւը և ոչ թէ «յետ մըղվել», ինչպէս գրում է Աչիկը։ Դասախօսները բոլորն էլ արժանացել են լսողների ծափահարութիւններին, այլ ոչ թէ ունկնդիրները «խէթ-խէթ հայեացք գցելով... հեռանում են...». դա միանգամայն չէ համապատասխանում իրականութեանը։

Ի դէպ՝ վարչութիւնս պարտք է համարում հրապարակով իր շնորհակալութիւնը յայտնել պ. պ. Յար. Խաչատրեանին, Իսահակ Տէր-Ղազարեանին, Յովհ. Բաղալեանին, Վարդան Տէր-Թորոսեանին և Յակոբ Տօնականեանին, որոնք չը մերժելով վարչութեանս խնդիրը՝ յանձն առան դասախօսել։

Նախագահ վարչութեան՝

Յովհ. Դարբինեան

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ի նկատի ունենալով, որ հայկական ջարդերը չեն դադարում, Թիւրքաց արտաքին գործերի մինիստր հայազգի Նորատունկեան էֆէնդին հրաժարական տուեց։

◆ Կ. Պոլսում հայոց ազգային ժողովի նիստը քննեց պատրիարք Արշարունու հրաժարականը։ Ինքը պատրիարքը բացակայ էր։ Նա յայտարարութիւն էր ուղարկել, խնդրելով ազատել իրան պատրիարքական պարտականութիւններից, որովհետև անկարող է իր պարտականութիւնը կատարել հայերի առաջ։ Լսելով Կաթողիկոսի հարցապընդումը, ժողովը որոշեց հաղորդել նրան ջարդերի մանրամասնութիւնները և ուղարկել այն հեռագիրները, որոնք ստացված են Դիարբեքիրից, Մուշից և Բիթլիսից՝ սկսված սպանութիւնների և ջարդարար պրօպագանդայի մասին։ Խօսեցին նախկին պատգամաւորներ Վարդգէսը, Պօտանեանը և Արամեանը. Եթէ, ասվում էին ճառերում, Բ. Դուռը մերժէ պաշտպանել, այն ժամանակ հայերը իրանք զէնքի կը դիմեն։

◆ Չերնոգորական թագաւորը «Б. Вѣд.»-ի թղթակցի հետ խօսելիս յայտնել է, որ քրիստոնեաների դրութիւնը այժմ Մակեդօնիայում այն աստիճանի ողբալի է, որ անկարելի է սառնասիրտ մնալ. «Եթէ ես թագաւոր չը լինէի,—ասել է նա,—կը վերցնէի հրացան և կը կազմէի հայդուկախումբ»։

◆ Սերբիայի և Բուլգարիայի դաշնը հաստատվում է սերբիական դեսպանի խօսքերով։

◆ «Թանինի» ասելով, Բօյէտինացը իր զօրախմբով շրջապատված է զօրքերով։

◆ Թիւրքաց մինիստրների խորհուրդը որոշեց բաւարարութիւն տալ մալիսօրների պահանջներին։

◆ Եւրօպական ստոյգ տեղեկութիւններից հաղորդում են, որ եթէ Բ. Դուռը իրապէս չիրագործէ իր խոստացած բարենորոգումները, այն ժամանակ բալկանեան պետութիւնները պատերազմ են յայտարարելու Թիւրքիային։ Թէ Սերբիայի, թէ Բուլգարիայի և թէ Չերնօգորիայի զօրքերը կազմ ու պատրաստ հրամանի են սպասում։ Յունաստանն էլ իր աջակցութիւնն է խոստացել։

◆ Ռուսաստանը և Իտալիան որոշել են միասին ազդել Չերնօգորիայի վրա, որպէսզի սահմանագլխում Թիւրք զօրքերի հետ կատարվող ընդհարումները ընդ միշտ դադարեն։

◆ Հեռագրում են, որ Թիւրք-իտալական խաղաղ բանակցութիւնները անսպասելի կերպով խզվեցին։

◆ Ռուս զօրամասի գործողութիւնները պարսից շահսէվան ցեղի դէմ շարունակվում են։ Ամենուրեք վերջինները պարտութիւն են կրում։

◆ Պարսկաստանի մի քանի տեղերում դարձեալ երևացել են նախկին շահ Մահմէդ-Ալիի գործակալները, որոնք պրօպագանդա են մղում յօգուտ Իրանի նախկին պետի։ Թէհրանում տիրում է անորոշ կացութիւն։

◆ «Б. В.»-ն հաղորդում է, որ Ռոմանօվների Տան 300-ամեայ յոբելեանի հանդէսները կը սկսվեն 1913 թ. մայիսից։

◆ Սեվաստօպոլի ռուս նաւաստիների անկարգութիւնների գործի առիթով զինուորական ծովային դատարանին են յանձնվելու 120 նաւաստի։ Նոյն վիճակին են ենթարկվելու նաև մօտ 100 կալանաւորվածներ։

◆ Մինիստրների խորհուրդը, «Рѣчь» լրագրի ասելով, որոշեց մինիստրական դէկլարացիան 4-րդ Պետական Դումայում չը կարդալ։

◆ Մօսկվայում հայ գաղութը հոգեհանգիստ կատարեց հանգուցեալ պրոֆ. Խախանովի յիշատակին։

◆ Ռուսաց ժող. լուս. մինիստր Կասսօն լրացուցիչ գումար է պահանջում Ռօստովում բժշկական ֆակուլտէտ հիմնելու համար։

◆ Ճան. հաղ. մինիստր Ռուխլովը առաջարկում է առաջին հերթին կառուցանել Կովկասեան լեռնաշղթայի երկաթուղին և Կարս-Սարիղամիշ գիծը։

◆ Կիևում հրէաների դէմ հալածանքները շարունակվում են։

◆ Փետրվարի 1-ին, Պետերբուրգի «Русскій Инвалидъ» ը տօնելու է իր գոյութեան 100 ամեակը։

◆ Զինուորական մինիստր գեներալ Սուխօմլինօվը երեք շաբաթով մեկնեց Ղրիմ։

Խմբագիր՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ե. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

СКАВУЛИНЪ

пилюли безъ запаха и вкуса, устраняютъ легко и успѣшно даже самый упорный запоръ.

Настоящія коробки „Скавулинъ" содержатъ: большія 40, меньшія 18 пилюль.

SCAVULINE
SCAVULINE
A. GASLIN
(В. 45354)

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐՍՐՍԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան վեներական (սիֆիլիս) հ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին նեարդային:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան կանանց և երեխայոց հ.:
Ն. Տ. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վերաբուժութեան և միզասեռ. հ.:
Գ. Յ. ԳՈՒՐԳԷՆՕՎ—12—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ-ԲԺԻՇԿ ԱՄԲՐՈՒՄՕՎԱ-ՄԵԼԻՔԵԱՆ —12—1 ժ. մանկաբարձութիւն և կանանց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Մ. Լ. ՌԵՆԻԳԵՐ-ԱՐԵՃԵՎԱ—6—7 ժ. մանկաբարձութիւն, կանանց և երեխայոց հիւ.:
Զ. Ա. ԹԱՌՈՒՄԵԱՆ—6—7 ժ. ներքին և երեխայոց հիւ. քննութիւն արեան, մէզի և այլն:
Վճարը 50 կ.: Չքաւորները ձրի: Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նաւասարդեան

1. 0—88

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Լոյս են տեսել
Մ. ՏԱՐԱԽՉԵԱՆԻ

1) «ՁԵՌՆԱՐԿ ԹԵԼԱԴՐՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ» (III տիպ) . 15 կ.
2) «Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ԵՐԳԵՐ» 3 կ.

Դիմել՝ Армавиръ (Куб. обл.), учителю Тарахчіану, կամ Բագուի «Պօսրեդնիկ» և Թիֆլիսի «Գուտտենբերգ» գրավաճառանոցներին։

(Ն. ու.) 595. 10—9

„Մշակի" խմբագրատանը
վաճառվում են
ՀԵՏԵՒԵԱԼ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԵՐԿԵՐԸ.

1) Հասարակութեան նեցուկները, Հ. Իբսէնի, թարգ. Լ. Բաբայեանի 50 կ.
2) Նոր կեանքի շեմքում, դրամ. էտիւդ գաւառ. կեանքից, Ա. Ք.. 40 կ.
3) Նշանվածներ, պիէս 3 գործ., Ալ. Արէլեանի . . . . . 60 կ.
4) Էգմօնտ, ողբերգ. 5 գործ., Վ. Գ. Գեօթէի, թարգմ. Հմ. Մաժինեանի . . . . . 50 կ.
5) Ուսանողներ, 3 գործ., Գ. Բաշինջաղեանի . . . . . 50 կ.
6) Կայէնի ճանկերում, դրամա 5 գործ., Աւետիք Առաքելեանի (յօգուտ «Մշակի» ֆօնդի) . . 50 [illegible]

Նրանք, որոնք այս գրքե[illegible]նակ կը պահանջեն մեզան[illegible] վճարելով, կը ստանան 25% զիջ[illegible] և ճանապարհածախսը մեզ վրա։ Վերադիր վճարով պահանջողներին կը լինի միմիայն 15%.

Հասցէն՝ Ред. газ. „Мшакъ", Тифлисъ.

(1) 10—1

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ընդունվում են
Գիշերօթիկ Աշակերտներ
որտեղ և կարող են [illegible]ատվել։
Հասցէն՝ Бебутовская ул., д, № 52, кв. 4.
689. 2—1

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։
Բէբուտովսկայա փող., № 33.
(Ա.Օ.) 377. 3—1

ՀԱՐԿԱՒՈՐ Է մի ինտելիգենտ
ՔԱՀԱՆԱՅ
Աֆանասեվսկի-Պօստիգ գիւղի (Եկատերինօդարի շրջ.) համար տարեկան 1000 րուբլի եկամուտով։ Ցանկացողները պայմանների մասին թող շտապեն դիմել՝ Թիֆլիս, «Վլադիկավկազ» հիւրանոց, Կարապետ Աբովեանին, առ. ժ. 10—12-ը և երեկ. ժ. 5—8-ը։
688. 1—1

ՇԻՆՈՒԹԵԱՆ ՆԻՒԹԵՂԷՆՆԵՐԻ ՊԱՀԵՍՏ
Ինժեներ Ի. Ս. Պօնդօյեվի
Թիֆլիս, Ելիզավետին. փ. № 164, անկիւն Բակինսկայա փ.: Տելէֆօն № 10—93.
ՊԱՀԵՍՏՈՒՄ ԿԱՆ
ՑԵՄԵՆՏ ԵՐԿԱԹԷ ԳԵՐԱՆՆԵՐ
ԵՐԿԱԹ—անկիւնի, կաթսայի, րիֆլէնօյ, տանիքի՝ սև և ցինկով պատած։ ԱՍՖԱԼՏ սըզրանեան։ ԳՈՒԴՐՕՆ, կրակի դիմացող աղիւս և կաւ։ Շինութեան և փուչ ԱՂԻՒՍ, ԿՂՄԻՆՏՐ մարսէլեան տեսակի և այլ առարկ.։ Աղիւսի սեփակ. գործարան Թիֆլիսում։ Ամեն տեսակ շինարարական նիւթեղէն. համար տրված պատուէրները կատարվում են շուտափոյթ։
(Չ.ու.կ) 617. 50—10

Երևանում «ԱՐԱՐԱՏ» գրախանութի հրատարակութեամբ լոյս տեսան
ԴԱՍԱԳԻՐՔ ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ
համաձայն հայոց եկեղ. տարր. դպրոցների ուս. ծրագրի, Ե. Տէր-Մարտիրոսեանի և Ռ. Օհանջանեանի, Ա. ՏԱՐԻ, բարեփոխած, երկրորդ տպագրութեամբ։
Մարդ, կենդանիներ, բոյսեր, հանքեր և բնական երևոյթներ՝ այն է ջերմութիւն, մագնիսականութիւն, օդ և ջուր, 108 երես 57 նկարով. գինն է 30 կոպ.։
Բ. ՏԱՐԻ, մարդ, կենդանիներ, բոյսեր, հանքեր, ֆիզիկա և քիմիա 206 երես, 135 նկարով, գինն է 50 կոպ.։
Դասագիրք Երկրաչափական Ձևագիտութեան
կազմեցին Թարվերդեան և Խաչ. Յարութիւնեան. գինն է 15 կոպ.։
Գումարով գնողներին բաւարար զեղչ։ Դիմել՝ Эривань, книжн. маг. „Араратъ". կամ Թիֆլիս, «ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ» և «ԳԻՐ» գրախանութներին։
(օ.մ.) 678. 3—2

Տ. Մ. ՓԻԼՈՅԵԱՆԻ
Առևտրական Գիտութիւնների Կուրսերում
Նոր մեթօդով սովորեցվում են
ՖՐԱՆՍԵՐԷՆ, ԳԵՐՄԱՆԵՐԷՆ և ԱՆԳԼԻԵՐԷՆ
պատ կարդալ, գրել և խօսել կարճ ժամանակվայ ընթացքում տեսական և գործնական պարապմունքների միջոցով, հանրամատչելի վճարով։ Կազմակերպվում են հասակաւորներից երեկոյեան խմբեր։ [illegible] արտասահման գնալ ցանկացողների համար։ Մանրամասն տեղեկութիւնները և ընդունելութիւնները կուրսերի գրասենեակում—ամեն օր՝ ժամը 10—12-ը և 4—7-ը։ Միխայլօվսկի պր. № 24—4.
(Ա.Օ.) 643. 0—9

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ Лорисъ-Меликовская улица, домъ казенный